

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2011 - 2015 ԹԹ.

Հաստատված է ԵՊԼՀ-ի խորհրդի կողմից (15.01.2011 N2 նիստ)
Վերջնական տարբերակը ընդունված է 2011թ. առաջին եռամսյակում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
2011-2015ԹԹ.

Հաստատված է ԵՊԼՀ գիտական խորհրդի կողմից (16.09.2011 N1 նիստ)

Երևան
«Լինգվա»
2011

ՆԱԽԱԲԱՆ

Դառնալով բարձրագույն կրթության համաեվրոպական տարածքի մաս՝ Հայաստանի համալսարանական համակարգը պարտավոր է անմիջապես արձագանքել նոր միտումներին և հաշվի առնել եվրոպական համալսարանական համայնքի կողմից ընդունված որոշումները:

Միջպետական և միջհամալսարանական մի շարք համաժողովներում և խորհրդակցություններում քննարկվել են եղած նվաճումներն ու հիմնախնդիրները, առաջարկվել են հետագա 2010-2020 թթ. զարգացման միասնական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ մոտեցումներ և գործողություններ. *Եվրոպայի համալսարանները 2010 թվականից հետո հռչակագիր* /Բոլոնիայի, Լիսաբոնյան համաժողովներ /2005/, *Համալսարանների եվրոպական խարտիա* /Լյուբլյանա 2008/, *Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների նախարարական համաժողովի Լոնդոնյան և Լյուվենի հռչակագրեր* /Լյուվեն 2009/, *Եվրախորհրդի կրթության նախարարների համաժողով* /Ստամբուլ 2006/ և *Եվրախորհրդի Եվրոպական լեզուների կենտրոնի հռչակագրեր* /Գրաց 2003, 2010/:

Բոլոնյայի գործընթացի ապահովմանը նպաստակաուղղված են ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքները, այդ օրենքներում կատարված փոփոխությունները, կառավարության որոշումները, այլ ենթաօրենսդրական ակտեր: /տե՛ս հավելված 1 և

<http://www.brusov.am/arm/education.asp?id=1#bologna/>

Նշված հիմնարար փաստաթղթերում առկա մոտեցումները հիմք են հանդիսացել Համալսարանի զարգացմանը ներկայացվող ծրագրի համար:

Համալսարանի ռազմավարական զարգացման հիմնական խնդիրներն ու սկզբունքները ներկայացված են ***ԵՊԼՀ –ի 2006-2010 թթ. ռազմավարական ծրագրում*** և բխում են անցյալում Համալսարանի իրագործած ու նրա ներկայիս առաքելություններից:

1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանը, արժեքավորելով և պահպանելով դասական լեզվաբանական բուհի իր առաքելությունը՝ դրա հետ մեկտեղ զարգացնելու և ընդլայնելու հումանիտար և միջմշակութային հաղորդակցմանը վերաբերող ուղղությունները, իր առաքելությունն է համարում՝

- ✓ կրթության միջոցով նպաստել Հայաստանի և աշխարհի ժողովուրդների ու պետությունների միջև բարեկամության հաստատմանը, քաղաքական, տնտեսական, մշակութային կապերի ամրապնդմանը, նրանց լեզուների և մշակույթների տարածմանը, համերաշխության, հանդուրժողականության, ժողովրդավարության գաղափարների և արժեքների արմատավորմանը,
- ✓ լինել համաաշխարհային և ազգային կրթական համակարգի մաս կազմող, գիտահեն հասարակության, աշխատուժի շուկայի հարավոփոխի պահանջներին բավարարող անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող բուհ,
- ✓ դառնալ մարդասիրական արժեքների, միջմշակութային հաղորդակցման, լեզվաբանական մտքի զարգացման, հումանիտար գիտությունների, մասնավորապես լեզվաբանության ու կրթության նորագույն ուղղությունների և հետազոտական մեթոդների արմատավորման ու տարածման օջախ,
- ✓ պատրաստել խորը գիտելիքներով օժտված և գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր,
- ✓ դառնալ բազմալեզվության, լեզվակրթության սկզբունքների մշակման, ժամանակակից լեզվաքաղաքականության տարածման և իրականացման կենտրոն:

Նոր տեղեկատվական հասարակության, ինչպես նաև հումանիտար հաղորդակցման գործընթացների ընդլայնման պայմաններում դառնալ գիտահետազոտական և կրթամշա-

կութային կենտրոն, որի հիմնական խնդիրներն ու նպատակները պետք է լինեն՝

✓ քաղաքական

- ա. ինտեգրվել եվրոպական կրթական համակարգին,
- բ. դառնալ միջմշակութային հաղորդակցության, լեզվաքաղաքականության և լեզվակրթության սկզբունքների մշակման և իրագործման կենտրոն,
- գ. դառնալ հանրապետությունում բազմալեզվության, միջմշակութային հաղորդակցության, Եվրախորհրդի և Եվրամիության լեզվաքաղաքականության ու քաղաքացիական կրթության տարածման և իրագործման կրթամշակութային կենտրոն.

✓ գիտահետազոտական

դառնալ հումանիտար, բանասիրական, լեզվաբանական և լեզվամշակութային դասական և նորագույն ուղղությունների ու մեթոդների զարգացման, հիմնարար և կիրառական հետազոտությունների կենտրոն.

✓ կրթական

- ա. ժողովրդավարացման և հումանիտարացման հիման վրա դառնալ որակապես նոր կրթական հաստատություն,
- բ. պատրաստել տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխանող մասնագետներ,
- գ. պատրաստել լեզվաբանական, բանասիրական, միջմշակութային հաղորդակցման բնագավառի՝ աշխատուժի շուկայի պահանջներին համարժեք մասնագետներ:

Վերահաստատելով նախկին գերապատվությունները՝ Համալսարանը միաժամանակ հարկ է համարում վերջին տարիների զարգացումների լույսի ներքո ընդլայնել ու խորացնել դրանք, ուստի ԵՊԼՀ-ի ներկայացվող ռազմավարական ծրագրում համադրվում են բուհի ավանդական գործունեությունը և համալսարանական համակարգի համընդհանուր նորագույն վերափոխումները: Ներկայացվող ծրագիրը միտված է վերափոխելու Համալսարանի ամբողջ ուսումնական և գիտական ուղղվածությունը՝ ելնելով այն ընկալումներից, որ գլոբալ աշխարհում ձևավորվել է համընդհանուր և միասնական շուկա, որտեղ ԵՊԼՀ-ն պետք է ի վիճակի լինի

մրցունակ դառնալու և ապահովելու իրեն բնորոշ ու յուրահատուկ արժանապատիվ դիրք:

Եթե նախորդ Ռազմավարական ծրագրի հիմնական խնդիրն էր ապահովել Բոլոնիայի գործընթացին համապատասխան կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ համաեվրոպական համակարգին համադրելի դառնալու համար, ապա այսօր Համալսարանը շատ ավելի բարդ ու պատասխանատու գերխնդիր ունի՝ պահպանելով և ամրապնդելով իր կայուն տեղը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում՝ միաժամանակ ինտեգրվել և դառնալ միջազգային բարձրագույն կրթական համակարգի մրցունակ եվ գործունակ դերակատար /ագենտ/:

Ինչպես նշվում է Լիսաբոնյան հռչակագրում «Համալսարանների հիմնական խնդիրն է՝ բնակչությանը պատրաստել գիտահեն հասարակության պայմաններին համահունչ, ինչը, որպես անհրաժեշտ գործոն, ենթադրում է նաև արդյունավետ հաղորդակցման ապահովում»:

Համալսարանը, արժեքավորելով և պահպանելով դասական լեզվաբանական բուհի իր առաքելությունը, դրա հետ մեկտեղ խորացնելու և ընդլայնելու է հումանիտար և միջմշակութային հաղորդակցմանը վերաբերող ուղղությունները:

Զարգացնելով զանազան ոլորտներում լեզվի և մշակույթի հենքի վրա հաղորդակցումն ապահովող ինչպես ավանդական, այնպես էլ նոր մասնագիտություններ, մասնագիտացումներ, արմատավորելով ուսուցման նոր ձևեր՝ բուհը ի վիճակի է տարածաշրջանում և ՀՀ-ում դառնալու լեզվաբանական, հումանիտար և միջմշակութային կրթության առաջատար կենտրոններից մեկը:

ԵՊԼՀ 2010-2015 թթ. Ռազմավարական ծրագիրը, նպատակ ունենալով Համալսարանը դարձնելու 21-րդ դ. համապատասխան ՀՀ առաջնային կրթագիտական, հումանիտար հաստատություն, նախատեսում է նոր որակի՝ նորարարական, հետազոտական Համալսարանի անցնելու ռազմավարությունը և նախանշում է անհրաժեշտ նպատակներ ու գործողություններ՝ կրթական, ուսումնական, գիտական, ֆինանսատնտեսական գործունեության և

կադրային քաղաքականության ոլորտները կատարելագործելու համար:

Հաշվի առնելով առաջիկա տարիներին Հայաստանում կանխատեսվող տնտեսական և ժողովրդագրական անբարենպաստ վիճակը՝ այս գերխնդրի լուծմանը հնարավոր է հասնել փոխկապակցված երեք գերապատվությունների շնորհիվ, այն է՝ որակ և միջազգայնացում, իսկ կազմակերպչական առումով՝ ներքին և արտաքին ցանցային լուծումներ: Ժամանակակից համալսարանը կրեատիվ /ստեղծարար/ տնտեսության մասն է կազմում և նման պայմաններում ի վիճակի է գոյատևելու միայն՝ իր շուրջը համախմբելով ՀՀ-ում առկա առանձին տարրեր, մաս դառնալով զանազան միջազգային համակարգերի, նախ և առաջ՝ ակադեմիական բնույթի, զարգացնելով նորարականն ու ստեղծագործականը բուհի ներսում, համագործակցելով ՀՀ-ում և Սփյուռքում:

Համալսարանը, առավելագույնս օգտագործելով իր բազմալեզու և բազմամշակույթ ներուժը, իր առջև խնդիր է դրել Հայաստանի համար ստանձնել առաջատարի դերը նոր տեսակի և որակի միջազգային համագործակցության ասպարեզում: Դրան հասնելու համար Համալսարանը պարտավոր է նոր որակ հաղորդել միջազգային համագործակցությանը՝ գործընկերային հարաբերություններից անցնելով դեպի ակտիվ անդամակցում հումանիտար, միջմշակութային, լեզվաբանական և մանկավարժական բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում գոյություն ունեցող կամ հատուկ ստեղծվող միավորումներին /կոնսորցիումներին/: Համալսարանի միջազգային համագործակցության ոլորտում այս նոր առաքելությունը ձևակերպվել է որպես ԵՊՀ նախաձեռնությամբ ընդունված, *Բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների համագործակցության սկզբունքների մասին Երևանյան «14 կետ», հռչակագրում*: /տե՛ս [http://www.brusov.am/docs/Cooperation in HEarm/](http://www.brusov.am/docs/Cooperation_in_HEarm/) և հավելված 2/

2. ՄԻՆՉԵՎ 2010 Թ. ԵՊԼՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը 1935թ. փետրվարի 4-ին հիմնադրված ռուսական մանկավարժական երկամյա կուրսերի իրավահաջորդն է: 1936թ. բացվել է գերմաներենի, իսկ մեկ տարի անց՝ ֆրանսերենի և անգլերենի բաժինները, որոնք 1948թ. վերափոխվեցին ֆակուլտետների:

1937թ. ինստիտուտը տվել է ռուսաց լեզվի ուսուցիչների առաջին շրջանավարտները:

1940թ. ինստիտուտը վերանվանվել է Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտ:

1941թ. ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետը տվել է իր առաջին շրջանավարտները:

1948թ. ֆակուլտետների հիման վրա ձևավորվել են երկու ինքնուրույն բուհեր՝ Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտը և Երևանի օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը, որոնք 1954թ. վերամիավորվել են:

1955թ. ինստիտուտը, պահպանելով կառուցվածքային ինքնավարությունը, ընդգրկվել է Երևանի պետական համալսարանի կազմի մեջ:

1962թ. ինստիտուտը նորից դարձել է ինքնուրույն հաստատություն և կոչվել է Վալերի Բրյուսովի անունով:

1985թ. ինստիտուտը պարզևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

1993թ. վերանվանվել է Երևանի Վ. Յա. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտ:

2001թ. ինստիտուտը դարձել է համալսարան և անվանվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան:

2003թ. անցում է կատարվել կրթական երկաստիճան՝ բակալավրիատ-մագիստրատուրա համակարգի:

2005թ. անցում է կատարվել կրեդիտավարկանշային համակարգի՝ ներդնելով Կրեդիտների կուտակման և փոխատեղման Եվրոպական համակարգը:

Ներկայումս ԵՊԼՀ-ն հանդիսանում է լեզվաբանական, մանկավարժական, միջնշակության հաղորդակցման բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացնող միջազգայնորեն ճանաչված բուհ, որտեղ մոտ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ ուսանող սովորում է 12 մասնագիտություններով և մասնագիտացումներով /տե՛ս հավելված 3/:

Բոլոր բաժիններում իրականացվում է բազմապրոֆիլ ուսուցում՝ հիմնական մասնագիտությանը (major) զուգահեռ մեկ մասնագիտացում (minor) և առնվազն երեք օտար լեզվի իմացություն:

Բուհում՝

- դասավանդվում են հետևյալ օտար լեզուները՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ռումիներեն, հոլանդերեն, ռուսերեն, բուլղարերեն, լեհերեն, ուկրաիներեն, հունարեն, արաբերեն, կորեերեն, չինարեն, ճապոներեն, հնդկերեն, պարսկերեն, թուրքերեն և վրացերեն:
- աշխատում են վարչական, ուսումնաօժանդակ, կրտսեր ծառայող 226 աշխատակիցներ և 441 դասախոս, որոնց ավելի քան 60%-ը գիտական աստիճան ու կոչում ունի.
- աշխատում են ավելի քան 19 ասպիրանտներ, 51 հայցորդներ, որոնք ատենախոսություններ են գրում 11 գիտական մասնագիտություններից: Ատենախոսություն ղեկավարելու իրավունք ունեն բուհի 46 դասախոսներ.
- գործում է 059 մասնագիտական դոկտորական խորհուրդը, որտեղ կազմակերպվում են ատենախոսությունների պաշտպանություններ՝ Հայաստանի գիտական աստիճանավորման անվանացանկի հետևյալ մասնագիտություններով.
Ժ.02.03 – Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն – բանասիրական գիտություններ, **Ժ.02.04** – Սլավոնական լեզուներ – բանասիրական գիտություններ, **ԺԳ. 00.02** – Դասավանդման և դաստիարակության

մեթոդիկա /օտար լեզուների և գրականության/ -
մանկավարժական գիտություններ:

Համալսարանի կառուցվածքը ներառում է.

- բակալավրական 3 ֆակուլտետ՝ օտար լեզուների, ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների, լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցման՝ 5 մասնագիտություններով ու 5 մասնագիտացումներով /տե՛ս հավելված 3/.
- 1 միասնական մագիստրատուրա 7 մասնագիտություններով ու 12 մասնագիտացումներով /տե՛ս հավելված 3/.
- 16 ամբիոններ¹,
- 11 կենտրոններ² և 10 կաբինետներ³:

Համալսարանն ունի մինչբուհական, բուհական և հետբուհական լրացուցիչ ու շարունակական մասնագիտական կրթության տարբեր ձևերի իրականացման, պրոֆեսորադա-

¹ Հայագիտության, ֆրանսերենի, գերմաներենի, անգլերենի հնչյունաբանության և քերականության, անգլերենի հաղորդակցման, անգլերեն 2-րդ մասնագիտության, լեզվաբանության և հաղորդակցման տեսության, ռոմանական լեզվաբանության, ռուսաց և սլավոնական լեզվաբանության, գրականագիտության, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, արևելյան լեզուների, մշակութային մարդաբանության և երկրագիտության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման և պլանավորման ու ֆիզդաստիարակության և արտակարգ իրավիճակների ամբիոններ:

² Համակարգչային և տեխնիկական միջոցների, էլեկտրոնային ուսուցման, հրատարակման, թեստավորման և ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակությունների ուսումնասիրությունների, կարիերայի, Ֆրանկոֆոնիայի թվայնացված տեղեկատվական, լրացուցիչ և շարունակական կրթության, հաղորդակցության և կրթական հատուկ մոտեցումների, Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման, միջազգային լրագրության, միջազգային տուրիզմի կենտրոններ:

³ Բյուրոսովագիտության, բուլղարերենի, լեհերենի, ռումիներենի, կորեերենի, հունարենի, իտալերենի, պարսկերենի, հոլանդերենի և վրացերենի կաբինետներ:

սախտասկան անձնակազմի վերապատրաստման, որակավորման բարձրացման բազմամյա փորձ: Համալսարանի ակտիվում կա բավարար ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կադրային պոտենցիալ:

3. ԲՈՒՈՆԻՍՅԻ ԳՈՐԾՆԹԱՅԸ ԵՊԼՀ-ՈՒՄ

Համալսարանում ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտավարկանշային համակարգի ներդրումն սկսվել է 2004 թ.-ից, իսկ 2007թ. լույս է տեսել «ԵՊԼՀ-ում ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտավարկանշային համակարգի կարգը», որը լուսաբանում է սույն համակարգի նպատակները, խնդիրներն ու գործառույթները /տե՛ս http://www.brusov.am/docs/YSLU_Credits_Maunal.pdf/:

2004-2005 ուս. տարում Համալսարանն անցել է բակալավրական կրթական աստիճանի, իսկ 2008-2009 ուսումնական տարում անցել է երկաստիճան ուսուցման համակարգի՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի մագիստրատուրայում ուսուցումը նախատեսում է մասնագիտացման կոնկրետ ոլորտի ընտրություն՝ գործնական և տեսական խոր գիտելիքներ ստանալու նպատակով: Ուսումնական գործընթացի մեջ ներգրավված են հայ և արտասահմանյան հայտնի մասնագետներ:

2010-2011 ուս. տարում ասպիրանտուրայում ներդրվել է կրեդիտավարկանշային համակարգը, որի համաձայն ասպիրանտները պետք է հավաքեն 180 կրեդիտ՝ ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից, կրթական և հետազոտական կառուցամասերից /տե՛ս հավելված 1/:

Բոլոնիայի գործընթացի ապահովման շրջանակներում Համալսարանը տարբեր երկրների համալսարանների հետ կնքել է պայմանագրեր, որոնց համապատասխան կետերի հիման վրա ապահովվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության շարժունությունը /տե՛ս հավելված 4/:

Համալսարանն իր շրջանավարտներին տրամադրում է Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ-ի կողմից մշակված ձևին համապատասխանող դիպլոմի հավելված՝ հայերենով և անգլերենով /տե՛ս հավելված 5/:

4. ՆԱԽՈՐԴ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՆՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նախորդ ծրագրի կատարման ընթացքին, ինչպես նաև նոր խնդիրների ձևակերպմանն անդրադարձ է եղել մի քանի եղանակով՝ ներ- և միջհամալսարանական համաժողովների, գործնական սեմինարների ժամանակ, կրեատիվ/ստեղծագործ/խաղի միջոցով, ինչպես նաև ֆակուլտետային և Համալսարանի գիտական ու կառավարման խորհուրդների նիստերում՝ ռեկտորի ամենամյա հաշվետվություններում: /տե՛ս հավելված 6 և

http://www.brusov.am/arm/about_university.asp?id=5

<http://www.brusov.am/arm/faculties.asp?id=1,2,3>

Այդ հարցերը քննարկվել են «Բարձրագույն լեզվաբանական կրթությունը բարեփոխումների ընթացքում» առաջին և երկրորդ միջազգային կոնֆերանսներում,

/տե՛ս <http://www.brusov.am/arm/res.asp?baj=conference/>

Եվրասիա հիմնադրամի հետ համատեղ կազմակերպած **«Բարձրագույն կրթության բարեփոխումները Հայաստանում. Կրթության համակարգի ինտեգրումը և ադապտացումը նոր իրականություններ»** կրեատիվ խաղի և թրեյնինգ-սեմինարների ընթացքում: /տե՛ս <http://www.brusov.am/arm/res.asp?baj=conference/>

Ինչպես նաև՝

- ✓ կատարվել և գիտխորհրդին է ներկայացվել Համալսարանի նախնական ինքնավերլուծությունը, ֆակուլտետային և գիտական խորհուրդների նիստերում ներկայացվել են ամբիոնների ինքնավերլուծությունները /տե՛ս <http://www.brusov.am/docs/YSLU-Assessment-report-edited.pdf> և հավելված 7/:

- ✓ պայմաններ են ստեղծվել հնարավորինս լայն և անկաշկանդ քննարկումների համար, հրավիրյալ ազգային եւ միջազգային առաջատար փորձագետների մասնակցությամբ:

Արձանագրենք, որ հաջողությամբ կատարված են 2006-2010թթ. ծրագրով նախատեսված հիմնական նպատակները, այն է՝ /նշենք միայն կարևորագույնները, մնացածների մասին տե՛ս **ԵՊՀ 2006 -2010 թթ. իրագործված ծրագրերի ամփոփ տեղեկանքը**՝ ըստ ռեկտորի ամենամյա հաշվետվությունների: / տե՛ս հավելված 6/

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԾՐԱԳՐՈՒՄ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ուսումնական գործընթացի ծրագրման, կազմակերպման և իրականացման շրջանակներում արձանագրվել են հետևյալ դրական արդյունքները.

- Համալսարանը դարձել է բազմապրոֆիլ. սովորողները հիմնական մասնագիտության հետ միասին ստանում են մեկ մասնագիտացում,
- ներդրվել է կրեդիտավարկանշային համակարգը,
- բացվել է մագիստրատուրա՝ Հայաստանում եզակի մասնագիտություններով և մասնագիտացումներով,
- կատարվել է Համալսարանում առկա մասնագիտությունների վերալիցենզավորում և նոր մասնագիտությունների լիցենզավորում, ներդրվել են համապատասխան մասնագիտությունների կրթական չափորոշիչներն ու ուսումնական պլանները,⁴
- անցում է կատարվել Կրեդիտների կուտակման և փոխատեղման եվրոպական համակարգին,
- նվազեցվել են լսարանային ժամերը՝ 36 ժամից հասցվելով 28-ի, ավելի շատ ժամանակ է տրվել ուսանողի անհատական և ինքնուրույն աշխատանքներին,

⁴ Օտար լեզու և գրականություն, լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, թարգմանչական գործ, ռուսաց լեզու և գրականություն, լեզվաբանություն, հանրային կառավարում, միջազգային լրագրություն

- համակարգչայնացվել են ուսանողների կողմից գրվող մոդուլային, թեստային աշխատանքները, դասախոսների կողմից մատուցվող դասախոսությունները,
- ներդրվել է դասախոսի անհատական վարկանշային գնահատման համակարգը, որի հիման վրա կատարվում է դրամական փոխհատուցում՝ դասախոսի հետագա գործունեության խթանման նպատակով:

Մասամբ կատարված են և ընթացքի մեջ են

Ընթացքի մեջ է և մշտական բնույթ է կրում նախորդ ծրագրի հիմնադրույթների մեծ մասը, որոնց հաջող կատարումը հնարավորություններ է ստեղծում ավելի խորացնելու և որակական հաջողության հասցնելու դրանց իրականացման գործընթացը: Առանց լրացուցիչ ֆինանսական աջակցության կատարված կտրուկ փոփոխությունները արմատավորման համար ժամանակ են պահանջում, ինչը և նախատեսում է սույն ծրագրի անդրադարձը նախկինում նշված նպատակներին:

Դրա հետ մեկտեղ արձանագրվել է, որ նախորդ ծրագրի մի շարք կարևոր հիմնադրույթներ չեն կատարվել կամ թերի են կատարվել

Հատկապես հարկ է նշել, որ՝

- բազմապրոֆիլ Համալսարանի կառուցվածքի անցնելով հանդերձ՝ դեռ լիովին և լիարժեքորեն չեն օգտագործվում կրեդիտային համակարգի հնարավորությունները, որի դեպքում Համալսարանը ձեռք կբերի սկզբունքորեն նոր որակ և գործունեության նոր ոլորտներ.
- որակի ապահովման մեխանիզմները դեռ չեն դարձել ուսումնական գործընթացի անբաժանելի մաս,
- մինչև վերջ հստակեցված չեն մագիստրոսական ծրագրերին ներկայացվող պահանջները,
- գիտահետազոտական աշխատանքը սերտորեն կապված չէ ուսումնամեթոդական աշխատանքների հետ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը չի համապատասխանում ժամանակից պահանջներին:

Վերոնշյալ հիմնադրույթների չկատարումը կամ մասնակի կատարումը հիմնականում պայմանավորված է ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների անբավարարությամբ, Համալսարանի զարգացման ռազմավարական խնդիրների և նյութական բազայի անհամարժեքությամբ, ինչն էլ ստիպում է նոր ծրագրում ավելի մեծ ուշադրություն դարձնել ռեսուրսների լրացուցիչ աղբյուրների հայթայթմանը:

6. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՀՀ-ի ամբողջական և վերջնական ինտեգրումը Բոլոնյան գործընթացին պայմանավորված է միասնական ԲԿՀՏ ստեղծմամբ, որն էլ կբերի նկատելի նոր շեշտադրումներ և առաջնայնություններ: Ստեղծվել է Միասնական տարածք, որն ենթադրում է համագործակցության նոր, լայն հնարավորություններ, բայց միևնույն ժամանակ՝ կրթական ծառայությունների ներքին և արտաքին շուկաներում սուր և անզիջում մրցակցություն, որի հիմքում ընկած են կրթության որակն ու համապատասխանությունը օրեցօր փոփոխվող և զանազանվող պահանջարկներին:

Գիտության, տեղեկատվական ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և միջպետական հասանելիությունը մարդու և հասարակության զարգացման սկզբունքորեն նոր միջավայր են ստեղծում: Առաջացել է մասնագիտական գիտելիքների անընդհատ թարմացման, այն է՝ ողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության անհրաժեշտություն: Իր տեղն ու դերը պահպանելու նպատակով Համալսարանը պետք է նորարարական և կրեատիվ /ստեղծարար/ բնույթի ռազմավարություն մշակի, որը նպատակաուղղված լինի բոլոր հիմնական գործառույթներին և գալիք տարիների ընթացքում նախատեսի այնպիսի ճկուն համակարգի ստեղծում ու զարգացում, որը թույլ կտա արագ արձագանքել հարափոփոխ հրամայականներին, շրջանավարտներ պատրաստել տվյալ ժամանակաշրջանում պահանջարկ ունեցող մասնագիտություններով՝ նրանց զինելով

համապատասխան գիտելիքներով, ունակություններով ու հմտություններով:

Նախորդ տարիներին կատարվող բարեփոխումները հիմնականում իրականացվում էին ուսանողների քանակի ավելացման շնորհիվ: Առաջիկա տարիներին կրթական բարեփոխումները ֆինանսավորման նոր մեխանիզմների անհրաժեշտության պահանջ կառաջադրեն, ուստի նոր ծրագիրը նախատեսում է անցում էքստենսիվ զարգացումից դեպի կրթական ծառայությունների բազմազանում /դիվերսիֆիկացիա/ և բարձր որակի ապահովում:

Ժողովրդական գործոնը և բյուջետային ֆինանսավորման կանխատեսելի չափը բուհի առջև պահանջ են դնում բոլոր ուժերը ներդնել ինքնակազմակերպման և ինքնապահովման համար՝ ներառյալ գիտական հետազոտությունների և նորարարական մեթոդների ու կրթական տեխնոլոգիաների ներդրումը, Համալսարանի ներթափանցումը նոր ոլորտներ և դրանց յուրացումը:

Տեղեկատվական /ինֆորմացիոն/ հասարակության դարաշրջանն ընդհանուր առմամբ նպաստավոր պայմաններ է ստեղծում բուհի համար՝ հաշվի առնելով, որ ԵՊԼՀ-ի հիմնական ռազմավարական նպատակն է՝ զանազան ոլորտներում տարատեսակ հաղորդակցումն ապահովող ամենաբարձր որակի մասնագետների պատրաստումը, նրանց վերապատրաստումն ու որակի մշտական բարձրացումը: Այս առումով Համալսարանը զարգացման և ընդլայնման մեծ հեռանկար ունի, այն է՝ ներկա հիմքի վրա նորարարական, գիտահետազոտական Համալսարանի ձևավորում, որն առաջին հերթին ենթադրում է գիտության, ուսուցման, պրակտիկայի միասնություն:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացն ուղեկցվում է լուրջ խնդիրներով, ուստի Համալսարանը չպիտի ապավինի թերզարգացած աշխատաշուկային, այլ ինքը, իր ոլորտի և իր լիազորությունների սահմաններում ոչ միայն աջակցողի, այլև առաջատարի դեր ստանձնելով, ակտիվ միջամտությամբ պիտի նպաստի միջազգային չափորոշիչներին համապատասխանող

պահանջարկի ձևավորմանը: Այսպիսով, 2010-2015 թթ. ընկած ժամանակահատվածում Համալսարանը տնտեսական ինքնուրույնության և կրթական ու գիտական ծառայությունների շուկայում առկա մրցակցության պայմաններում պիտի գործի որպես երկարաժամկետ ռազմավարական նպատակներ հետապնդող և իրականացնող սկզբունքորեն բազմակողմանի սուբյեկտ:

Ռազմավարական նպատակին հասնելու համար ԵՊԼՀ-ն հենվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- մասնագիտությունների բազմազանում, կրթության ձևի և բովանդակության մշտական արդիականացում, ընդլայնում,
- կրթության բարձր որակի ապահովում,
- գիտական հետազոտությունների ու կրթական գործընթացի առաջընթաց և միասնականացում,
- դասախոսների և ուսանողների ստեղծագործական համագործակցություն,
- բոլոր ոլորտների և գործառույթների միջազգայնացում,
- կառավարման և համագործակցության ցանցայնացում,
- ակադեմիական ազատությունների և համալսարանական ինքնավարության զարգացում:

ԲԱԺԻՆ 1.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

2006-2010թթ. ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Հասարակության արդի պահանջներին և միջազգային ծրագրային չափանիշներին համապատասխան՝ կատարվել են կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ:
2. ՀՀ ԿԳ նախարարության կողմից լիցենզավորվել են Համալսարանի բակալավրական և մագիստրոսական բոլոր ծրագրերը:
3. Ստեղծվել է Համալսարանի մագիստրատուրա, ներդրվել են մագիստրոսական ծրագրեր 12 ուղղություններով:
4. Ավարտվել է Համալսարանի ամբողջական անցումը կրեդիտային համակարգի:
5. Բոլոնիայի գործընթացի դրույթներին համապատասխան մշակվել են նոր ծրագրեր և վերանայվել են առկա ծրագրերը՝ ապահովելով վերջիններիս համատեղելիությունը կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ներդրվել է միջազգային նմուշի համապատասխան դիպլոմի հավելված:
6. Նոր սերնդի դասագրքերի և ձեռնարկների ստեղծման, ինչպես նաև ուսուցման նոր ձևերի և մեթոդների ներդրման միջոցով, որոնք հաշվի են առնում ուսանողի՝ որպես անհատի հետաքրքրություններն ու ունակությունները, ապահովվել է ուսման որակը:
7. Իրականացվել է ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման համալսարանական գործող կառուցվածքի վերակազմակերպում՝ կրեդիտային համակարգի առանձնահատկություններին համապատասխան:
8. Ստեղծվել է ուսանողների գրանցման և ուսումնառության արդյունքների կառավարման համալսարանական միասնական

կառույց /գրանցման գրասենյակ/՝ գնահատականների էլեկտրոնային մուտքագրմամբ:

9. Նվազեցվել է ուսումնական ծրագրերի շաբաթական ծանրաբեռնվածությունը, և այն հասցվել է 28-ի, թեև նախատեսված էր դա հասցնել 24-ի:
10. Բոլոր դասընթացները և առարկայական նկարագրերը էլեկտրոնային ձևերով տեղադրված են էլեկտրոնային կայքում:
11. Ստեղծվել են Համալսարանի մագիստրոսական և հետբուհական ծրագրերի բաժինը և շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը:
12. Ուսումնական ծրագրերում կամընտրական առարկաների բաղադրիչը չ հասցվել 50 տոկոսի:
13. Չեն ներդրվել երեկոյան, հեռավար ուսուցման ձևերը, երկրորդ կրթության ինստիտուցիոնալ հիմքերը կրում են սխալաստիկ բնույթ:
14. Ձևավորման փուլում է ՀՀ և արտերկրի կրթական և գիտահետազոտական գործընթացների փորձի ուսումնասիրման, արտասահմանյան ուսումնական ծրագրերի և դասագրքերի վերլուծական համակարգը:
15. Հազվադեպ են և բավարար հիմքերի վրա չեն on-line ուսուցման փորձերը, խիստ սահմանափակ են օտարալեզու ուսումնական նյութերը:

1. Համալսարանի վարկանիշը բարձրացնելու և բակալավրական կրթական ծրագրերի մրցունակությունն ապահովելու նպատակով լուծել հետևյալ խնդիրները.

- 1.1 Ներդնել բակալավրական և մագիստրոսական կրթական նոր ծրագրեր, այդ թվում բազմապրոֆիլային միջմասնագիտական՝ լեզվաբանության, հաղորդակցման, մշակույթի, կրթության, տարածա- և երկրագիտության, միջազգային և հանրային հարաբերությունների ոլորտների մասնագետների պատրաստման համար:

- 1.2 Վերանայել և համապատասխան առաջարկ ներկայացնել ՀՀ ԿԳ Նախարարությանը Համալսարանի մասնագիտությունների և մասնագիտացումների չափորոշիչները ժամանակակից տեղական և միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:
- 1.3 Համալսարանի կրթական ծրագրերում կրճատել պարտադիր լսարանային ժամերը, ավելացնել կամընտրական բոլոր առարկաների քանակը, կրթական ծրագրերում կամընտրական առարկաների բաղադրիչը հասցնել 50 տոկոսի:
- 1.4 Կոնտակտային լսարանային ժամերը ուսումնական ծրագրերում հասցնել 24-ի:
- 1.5 Ուսանողի մասնագիտացումը որոշել ըստ պարտադիր կրեդիտների գումար ապահովող նախօրոք ընտրված առարկաների փնջի:
- 1.6 Ստեղծել նախադրյալներ, որպեսզի ուսման տևողությունը, ընթացքն ու վճարումը պայմանավորվի պահանջվող կրեդիտների ձեռք բերման անհրաժեշտությամբ, այլ ոչ` ըստ տարիների կամ կիսամյակների:
- 1.7 Արդիականացնել և կատարելագործել կրթության բովանդակությունը` կիրառելով գիտական հետազոտությունների արդյունքները ուսումնական գործընթացում:
- 1.8 Լիարժեք ապահովել կրթական գործընթացը տեղեկատվական նյութերով, ուսումնական գրականությամբ, media կենտրոնի հնարավորություններով, համացանցի միջոցներով:
- 1.9 Ավանդական ձևով կազմակերպված խմբերից աստիճանաբար անցում կատարել դեպի ad hoc` ուսանողի ընտրությամբ ստեղծվող խմբերը:
- 1.10 Ստեղծել տարբերակված առարկայական դասընթացներ Համալսարանի բակալավրիատի մասնագիտությունների համար և ծրագրեր լրացուցիչ ու հեռավար բակալավրական կրթության համար:
- 1.11 Համագործակցել ՀՀ և արտերկրի այլ բուհերի հետ` կրթական ծրագրերի համապատասխանեցման նպատակով:

1.12 Արտասահմանցի ուսանողների համար տարբեր օտար լեզուներով պատրաստել տարբերակված ուսումնական ծրագրեր:

2. Մագիստրոսական ծրագրերի որակի բարձրացման նպատակով լուծել հետևյալ խնդիրները

- 2.1 Օգտագործելով արտասահմանյան գործընկեր համալսարանների փորձը՝ ներդնել անհատական նոր մասնագիտություններ և մասնագիտացումներ՝ նախապատվությունը տալով Հայաստանի համար եզակի ուղղություններին:
- 2.2 Մագիստրոսական ծրագրերի դասընթացներում առավելագույնս նախատեսել հետազոտական և ստեղծագործական բաղադրիչը:
- 2.3 Մագիստրոսական կրթական ծրագրերը ձևավորել ուսանողների ընտրությամբ՝ ավելացնելով կամընտրական բաղադրիչը:
- 2.4 Մտեղծել Համալսարանի մագիստրատուրայի հեռավար և երեկոյան բաժիններ:
- 2.5 Մագիստրոսական բաժնի և մագիստրոսական ու հետբուհական ծրագրերի բաժինների աշխատանքը համակարգելու, ինչպես նաև ընթացիկ խնդիրները քննարկելու և լուծելու նպատակով լիարժեք ձևով օգտագործել Համալսարանի մագիստրատուրայի խորհրդի հնարավորությունները:

3. Համալսարանի հետբուհական աստիճանի կրթության զարգացման նպատակով առաջնային է հետևյալ խնդիրների լուծումը

- 3.1 Ուսումնասիրել և կիրառել արտասահմանյան համալսարանների փորձը հետբուհական կրթության նոր ձևերի կիրառման վերաբերյալ;
- 3.2 Շարունակել միջամբիոնական համագործակցությունը հետբուհական կրթության միասնական ռազմավարության մշակման ուղղությամբ:
- 3.3 Վերակառուցել համալսարանի ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ որակավորումների համաեվրոպական հենքի պահանջներին համապատասխան;

- 3.4 Իրականացնել ասպիրանտուրայի /հայցորդության/ գիտակրթական ծրագիր՝ իր կրթական և հետազոտական կառուցամասերով, արտահայտելով դրանց աշխատածավալները ECTS կրեդիտներով՝ նախատեսելով անհրաժեշտ մասնագիտական, փոխանցելի (ընդհանուր) և մանկավարժական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը միտված դասընթացներ և ծրագրեր:
- 3.5 Բարձրացնել ասպիրանտուրայի (հայցորդության) և դոկտորանտուրայի աշխատանքների արդյունավետությունը: Նախատեսել հետազոտական աշխատանքների անմիջական կիրառումը ուսումնական գործընթացում, հատուկ ուշադրություն դարձնել միջազգային հանդեսներում և գիտաժողովներում ասպիրանտների ու դոկտորանտների մասնակցությանը:

4. Լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտում՝

- 4.1. Ներդնել լրացուցիչ կրթության ծրագրեր և դասընթացներ, որոնք բացառիկ են Երևան քաղաքի և հանրապետության տարածքում՝ մասնավորապես լեզվաբանության, մանկավարժության և օտար լեզուների ուսուցման ուղղությամբ:
- 4.2. Ակտիվացնել պետական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումը՝ լրացուցիչ կրթական ծառայություններ տրամադրելու ուղղությամբ:
- 4.3. Ընդլայնել Կոնֆուցիուսի Ինստիտուտի լրացուցիչ կրթական և մշակութային ծառայությունները, ինստիտուտի ծառայությունների արդյունավետ սպառման նպատակով ակտիվացնել գովազդային գործունեությունը:
- 4.4. Իրականացնել լրացուցիչ կրթական ծառայությունների կազմակերպման ձևերի և գնային ճկուն քաղաքականություն:
- 4.5. Համալսարանի ուսանողների հիմնական կրթությանը զուգահեռ առաջարկել լրացուցիչ կամընտրական առարկաներ:
- 4.6. Մշակել վերապատրաստման ծրագրեր ինչպես համալսարանի դասախոսների և աշխատակիցների, այնպես էլ կրթության

ուրուտի աշխատողների և հանրակրթական դպրոցի
ուսուցիչների համար:

ԲԱԺԻՆ 2
ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2006-2010թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումները և թերացումները

1. Ընդլայնվել է դիմորդների ընդունելությունը ուսումնակրթական նոր ծրագրերի ներդրման, նոր մասնագիտությունների (մասնագիտացումների) ուսուցման նոր ձևերի ընդլայնման շնորհիվ:
2. Ընդլայնվել է օտար և ՀՀ-ում բնակվող փոքրամասնություններին դասավանդվող լեզուների շրջանակը:
3. Ընդլայնվել է Համալսարանի մասին տեղեկատվության տարածումը հանրապետության դպրոցներում և այլ հաստատություններում՝ Համալսարանի ուսանողների, շրջանավարտների, շրջանավարտների միության միջոցով:
4. Ընդլայնվել է համալսարան-դպրոց համագործակցությունը՝ այդ թվում Համալսարանում ուսուցիչների վերապատրաստման և դպրոցներում Համալսարանի ուսանողների մանկավարժական պրակտիկայի շնորհիվ:
5. Համալսարանի շարունակական կրթության կենտրոնում կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար:

1. Համալսարանի ուսանողական համակազմի ընդլայնման նպատակով հարկավոր է լուծել հետևյալ խնդիրները.

- 1.1 Հասարակության մեջ ամրապնդել համալսարանի՝ որպես հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատության իմիջը՝ հավուր պատշաճի ներկայացնելով բուհի կրթական ծրագրերի և ուսուցման որակը:

- 1.2 Ընդլայնել Համալսարանի ընդունելության պրոֆիլը և այն համապատասխանեցնել երկրի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին: Զարգացնել ուսանողական համակազմի միջազգայնացման առկա միտումը:
- 1.3 Շարունակել աշխատանքը հանրապետության հանրակրթական հաստատությունների հետ, կազմել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք կապահովեն ԵՊԼՀ-դպրոց սերտ համագործակցությունը:
- 1.4 ԶԼՄ-ների միջոցով տարածել տեղեկատվություն համալսարանի կրթական ծրագրերի վերաբերյալ:
- 1.5 Ստեղծել աշխատանքային խումբ համալսարանի վարչական աշխատողներից, պրոֆեսորադասախոսական կազմից և ուսանողական խորհրդի անդամներից, որը կմշակի և կիրականացնի կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը, օբյեկտիվությանը և անաչառությանը:
- 1.6 Կնքել երկարաժամկետ համաձայնագրեր ՀՀ-ում գործող ավագ դպրոցների և վարժարանների հետ՝ համատեղ կրթական գործունեություն իրականացնելու վերաբերյալ: Այդ դպրոցներում ստեղծել բազային դասարաններ:
- 1.7 Մարզպետարանների և տեղական իշխանությունների հետ համագործակցելով՝ ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ հանրապետության բոլոր մարզերում:
- 1.8 Մշակել և ներդնել արտասահմանցի ուսանողների համար օտար լեզուներով կրթական ծրագրեր, այդ թվում նաև՝ հեռավար ուսուցմամբ:
- 1.9 Ընդլայնել և ակտիվացնել Համալսարանի գովազդարշավը՝ այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով ԵՊԼՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումներին, ուսանողական կառույցներին, հիմնական գործատուներին և շահագրգիռ այլ

կազմակերպություններին:

- 1.10 Ակտիվացնել դիմորդների հետ նախապատրաստական դասընթացների գործունեությունը, հանրակրթական դպրոցներին առաջարկել միասնական դասընթացների փաթեթներ: Շարունակաբար նախապատրաստել և հանրակրթական հաստատություններին տրամադրել Դիմորդի ուղեցույցներ և Համալսարանի մասին պատմող տեսասկավառակներ:
- 1.11 Ընդլայնել հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ կազմակերպելով ամենամյա ճանաչողական այցեր Համալսարան: Դիմորդների համար պարբերաբար կազմակերպել բաց դռների օրեր և ներկայացնել նրանց բուհի կրթական հնարավորությունները:
- 1.12 Ավանդական դարձնել հանրապետական օլիմպիադաները, մրցույթները հանրակրթական դպրոցների աշակերտների մասնակցությամբ, ինտեգրել լավագույն մասնակիցներին բուհի առօրյային, կազմակերպել նրանց հետ հանդիպումներ, քննարկումներ, բանավեճեր, կողմնորոշել նրանց դեպի համալսարանի բակալավրական ծրագրերի ընտրությունը:
- 1.13 Կիրառել ՁԼՄ-ների և համացանցի հնարավորությունները համալսարանի ծրագրերն իրագրեցնելու նպատակով, պատրաստել նյութեր, որոնք կներկայացնեն դիմորդներին կրթական ծրագրերի բովանդակությունը և առավելությունները:
- 1.14 Աջակցել ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների համար բարձրագույն կրթության հարցերը լուսաբանող էլեկտրոնային թերթի ստեղծմանն ու տարածմանը:

ԲԱԺԻՆ 3

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2006-2010 թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Ապահովվել է ուսանողների իրազեկությունը կրեդիտային համակարգի առանձնահատկություններին, ինչպես նաև նրանց ակտիվ մասնակցությունը ուսումնառության այլընտրանքային հնարավորությունների ընտրությանը:
2. Համալսարանի դասընթացների կառուցվածքը և ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները համապատասխանեցվել են ECTS պահանջներին:
3. Ընդլայնվել են որակյալ ուսումնառությանը նպաստող օժանդակ ծառայությունները, բարելավվել է ուսանողների և դասախոսների համագործակցությունը:
4. Պատրաստվել են տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխան մասնագետներ՝ ապահովելով աշխատաշուկայի անհրաժեշտ լեզվաբանական և միջնակության իրազեկությունների ձևավորումը:
5. Նորացվել և կատարելագործվել է բակալավրական և մագիստրոսական մասնագիտական կրթության բովանդակությունը, ներմուծվել են այլընտրանքային, կամընտրական և նորարարական առարկաներ:
6. Մշակվել են դասավանդման ուսանողակենտրոն մոտեցումներ՝ կարևորելով դասախոսների ղեկավարությամբ ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքի դերը, ներդրվել է գիտելիքների վերահսկման էլեկտրոնային համակարգ:
7. Համապատասխանեցվել են լեզվի իմացության, դասավանդման և գնահատման չափանիշները համաեվրոպական հայեցակարգին և մակարդակներին:

8. Մասամբ մշակվել և որոշ մասնագիտությունների համար ներդրվել է մասնագիտական պրակտիկայի որակապես նոր համակարգ:
9. Ստեղծվել է Համալսարանի որակի ապահովման կենտրոն և իրականացվել է բուհի կրթական ծրագրերի և դրանք իրականացնող ուսումնական ստորաբաժանումների գործունեության վերլուծության և որակի գնահատման փուլային գործընթաց:
10. Որակի ներքին գնահատման արդյունքների հիման վրա պլանավորվել և իրականացվել է ուսման որակի բարձրացում և ըստ միջազգային չափանիշների համապատասխանեցման միջոցառումներ:
11. Ուսանողների գործնական և տեսական առարկաների մնացորդային գիտելիքների մակարդակը ստուգելու նպատակով կազմվել են ծրագրային պահանջներն ապահովող թեստերի բանկ և հարցաշարեր:
12. Կատարելագործվել են ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համակարգերը և գործընթացները բոլոր կրթական ծրագրերի համար՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը:
13. Կրթական ծրագրերը նպատակաուղղվել են Եվրախորհրդի քաղաքացիական և ժողովրդավարական կրթության սկզբունքների և գաղափարների տարածմանն ու ներդրմանը:
14. Համապատասխանեցվել են ուսանողների հետ տարվող արտալսարանային աշխատանքը և մասնագիտական ծրագրային պահանջները:

15. Կնքվել են մի շարք երկկողմանի պայմանագրեր և հարաբերություններ աշխատաշուկայում գործող կազմակերպությունների հետ:
16. Մասամբ են իրագործվել ուսմանը նպաստող խրախուսական պայմաններ շնորհալի և տաղանդավոր ուսանողների համար:
17. Թեև ստորագրվել են համագործակցության պայմանագրեր, սակայն չի իրագործվել համագործակցություն տարածքային բուհերի և մանկավարժական քոլեջների հետ՝ հեռավար մարզային ուսուցման կենտրոններ ստեղծելու նպատակով:
18. Համալսարանի առավել փորձառու դասախոսներից չի ձևավորվել ուսումնական խորհրդատուների որակյալ կազմ՝ նախատեսելով խրախուսման գործուն մեխանիզմներ:

1. Նպատակ ունենալով իրականացնել բարձրորակ ուսումնական գործընթացի կազմակերպում և կրթական ծրագրերի մշակում և անհրաժեշտ որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմով ապահովում, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, համալսարանը իր առջև նպատակ է դնում լուծել հետևյալ խնդիրները.

- 1.1 Սահմանել համապատասխան մեթոդներ և չափանիշներ Համալսարանի որակավորման աստիճանների և մադներիտությունների ելքային կրթական մասնավորեցված չափորոշիչների գնահատման համար:
- 1.2 Վերակազմավորել ուսումնական մասը՝ այն դարձնելով վարչություն, վերապահելով դրան օպերատիվ հսկողության գործառույթներից բացի որակի կառավարման, վերլուծական և դիտարկման գործառույթները:
- 1.3 Համալսարանում ստեղծել միասնական տեղեկատվական և ուսումնամեթոդական համակարգ՝ հիմնված ժամանակակից

տեղեկատվական ու կրթական միջավայրի վրա, որը հասանելի կլինի պրոֆեսորադասախոսական անձնակազմին և ուսանողությանը:

- 1.4 Ստեղծել ուսանողների յուրացրած իրազեկությունների օբյեկտիվ գնահատման համակարգ, ներդնել ուսուցման ժամանակակից սկզբունքները, զարգացնել հաջորդական միջառարկայական ուսուցումը և ուսումնական ծրագրերի կառուցումը մոդուլային մեթոդաբանությամբ:
- 1.5 Օգտագործել ուսուցման թիմային և անհատական, տեսական և գործնական մեթոդներն ու ձևերը (փորձի փոխանակում, սյուժետա-դերային խաղեր և այլն):
- 1.6 Մշակել ու ներդնել առարկայի ուսումնասիրման ժամանակ ուսանողների ինքնուրույն աշխատանքի խթանման ու գնահատման մեխանիզմներ:
- 1.7 Ստեղծել բակալավրերի և մագիստրոսների պատրաստման անհատական կրթական հետազոծերի համակարգ և ձևավորման տեխնոլոգիա, որոնք կապահովեն մասնագիտական իրազեկությունների ինքնուրույն ընտրություն՝ նախատեսվող անհատական ուսումնական պլանով:
- 1.8 Բարձրացնել դասախոսների ակտիվությունը սովորողների ստեղծագործական կարողությունները, անհատի դաստիարակության և անհատական ուսուցման մեջ, նախատեսել անհատական ծրագրերի ձևավորում, որոնք հաշվի կառնեն ուսումնական պլանի պահանջներն ու ուսանողների անհատական հատկանիշները:
- 1.9 Ամրապնդել թողարկող ամբիոնների նյութատեխնիկական բազան, ստեղծել դրանց կից պրոֆիլային կաբինետներ, վիրտուալ և իմիտացիոն դասարաններ:
- 1.10 Զարգացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի նոր ձևեր:

- 1.11 Բարելավել, ծրագրավորել ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատածավալները:
- 1.12 Արդիականացնել և միասնական դարձնել ընդհանուր կրթության կառուցամասը բակալավրական կրթական ծրագրերում՝ դրանք ուղղելով ուսանողների հաղորդակցական, քննադատական մտածողության, քանակական փաստարկման, միջանձնային և կառավարման կարողությունների զարգացմանը և մասնագիտական էթիկայի ձևավորմանը:
- 1.13 Ստեղծել բակալավրերի և մագիստրոսների պատրաստման անհատական կրթական հետազոծերի համակարգ և ձևավորման տեխնոլոգիա, որոնք կապահովեն մասնագիտական իրազեկությունների ինքնուրույն ընտրություն և ախտաբանական անհատական ուսումնական պլանով ուսուցում:
- 1.14 Ստեղծել համապատասխան պայմաններ և մեխանիզմներ՝ ուսումնական գործունեությունը անհատական ծրագրերով կազմակերպելու համար:
- 1.15 Ձևավորել ուսումնական խորհրդատուների ինստիտուտ առանձին մասնագիտությունների և կրթական աստիճանների համար՝ ներառելով Համալսարանի առավել փորձառու դասախոսներին և կանոնակարգելով նրանց պարտականություններն ու իրավունքները:
- 1.16 Ստեղծել նպաստավոր պայմաններ մասնակի բեռնվածությամբ ուսումնառության կազմակերպման և ըստ կրեդիտային բեռնվածության ուսման վարձերի վճարման համար:
- 1.17 Մահմանել և էլեկտրոնային տեսքի բերել ուսանողների կողմից դասընթացների ընտրությունը և գրանցումը: Բարելավել և պարզեցնել ուսման առաջադիմության տվյալների մուտքագրումն ու մշակումը, ակադեմիական տեղեկագրի ու դիպլոմի հավելվածի պատրաստումը:
- 1.18 Զարգացնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական

մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, իթանել այս ուղղությամբ կրթափորձի նոր նախաձեռնությունները, իրախուսել դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսներին:

- 1.19 Նոր պահանջների լույսի ներքո սահմանել կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք կարգավորում են ուսումնական գործընթացի կազմակերպումը, ակադեմիական առաջընթացի ու որակի մոնիթորինգը, գնահատումը և ատեստավորումը:
- 1.20 Ուսանողների կրթական գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով կիրառել ուսուցման և դասավանդման արդյունավետ մեթոդներ, ինչպիսիք են կարճաժամկետ ինտենսիվ դասախոսությունները /այդ թվում՝ հրավիրված մասնագետների կողմից/, սեմինարները, կոլոքվիումները և քվեարկումները, աշխատաժողովները կամ ամառային դպրոցները՝ նախապատվությունը տալով դասավանդման ինտերակտիվ մեթոդներին:
- 1.21 Նպաստել մագիստրոսների և ասպիրանտների /հայցորդների/ ակադեմիական շարժունությանը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում՝ արտասահմանյան առաջատար բուհերի հետ ստեղծելով համատեղ ծրագրեր ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական փուլերի համար, աջակցել միջազգային գիտաժողովներին և դպրոցներին նրանց մասնակցությանը:
- 1.22 Շարունակել մասնագիտական պրակտիկայի որակական նոր համակարգի ստեղծումը, մշակել դրա չափանիշները համալսարանի բոլոր մասնագիտությունների համար:
- 1.23 Ընդլայնել համալսարանի լեզվի կենտրոնի գործառնությունները և դասավանդվող լեզուների ցանկը:

2. Ուսումնական գործընթացում նպատակ ունենալով բարձրացնել

կրթական ծրագրերի մշակման, կազմակերպման և կառավարման որակը, համալսարանն իր առջև դնում է հետևյալ խնդիրները.

- 2.1 Ներդնել որակի ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան և ստեղծել Համալսարանի որակի ներքին հավաստման (ապահովման) համակարգի նոր հայեցակարգ՝ որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի, կազմակերպչական կառուցվածքի ընդգրկմամբ և սահմանել կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների պարտականությունները և գործառույթները:
- 2.2 Մշակել Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները:
- 2.3 Պարբերական դարձնել Համալսարանի կրթական գործունեության ինքնագնահատման զեկույցի պատրաստումը և գնահատումը: Ստեղծել Համալսարանի որակի ներքին հավաստման (ապահովման) համակարգի նոր հայեցակարգ՝ որակի շարունակական բարելավման ռազմավարություն:
- 2.4 Ստեղծել ներքին չափանիշներ և ընթացակարգեր՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային և ռեսուրսային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար:
- 2.5 Ստեղծել և հրապարակել չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր՝ ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար՝ ներառյալ վերանայման և բողոքարկման մեխանիզմները, և ապահովել դրանց հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը:

ԲԱԺԻՆ 4

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

2006-2010 թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Իրագործվել են ուսանողի համակողմանի զարգացումը խթանող նորամուծություններ:
2. Իրականացվել են ուսանողի բազմակողմանի գործնական պատրաստվածությանը նպաստող աշխատանքներ հետևյալ ուղղություններով:
 - ա/ սոցիալական` իրականացվել են բուհական միջոցառումներ, որոնք նպաստել են ուսանողների հասարակայնացմանը, տարաբնույթ նորմերի և արժեքների հետ ծանոթացմանը, թիմային աշխատանքի ունակության զարգացմանը:
 - բ/ անհատականացում` ուսումնական ծրագրերի մեջ բովանդակային փոփոխություններ կատարելով, ինչպես նաև բազմաթիվ դաստիարակչական և հասարակական միջոցառումներ կազմակերպելու շնորհիվ մեծ ուշադրություն է դարձվել ուսանողի անհատական դրական որակների զարգացմանը, ինքնազարգացմանը, ինքնակատարելագործմանը, ինքնաքննադատությանը, ինքնատիրապետմանը, ինքնագնահատմանը, աշխատանքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, համագործակցության պատասխանատվության բարձրացմանը, մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ փոխհամագործակցությանը, մասնագիտական բոլոր տեսակի խնդիրների իրագործման համար հմտությունների ձևավորմանը:
 - գ/ հոգեբանական` իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպաստել են ուսանողի հոգեբանական և համագործակցային մշակույթի զարգացմանը, հանդուրժողականությունը որպես ընդհանրական իրազեկության ձևավորմանը:

3. Պահպանվել և ամրապնդվել են համալսարանական ավանդույթները, ապահովվել է համալսարանական արժեքների ժառանգականությունը:
4. Ժողովրդավարացվել են ուսանող-դասախոս հարաբերությունները՝ փոխադարձ հարգանքի, վստահության և համագործակցության մթնոլորտի ձևավորման և պահպանման պայմաններում:
5. Մտեղծվել և հաջողությամբ գործում են բազմալեզու թատերական խմբակը, «Ծիծեռնակ» երգչախումբը, Ուրախների և հնարամիտների, «Ինչ որտեղ, երբ» ինտելեկտուալ, «Բանավեճի» ակումբները: Համալսարանի ուսանողները բազմիցս հաղթող են ճանաչվել հանրապետական և միջազգային տարբեր մարզական մրցույթներում:

1. Ուսանողների հետ տարվող կազմակերպչական և Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման նպատակով Համալսարանն իր առջև նպատակ է դնում լուծել հետևյալ խնդիրները.

- 1.1 Ուսանողության հայրենասիրական, մշակութային, բարոյագիտական, սպորտային դաստիարակության որակը բարձրացնելու համար ապահովել բոլոր ամբիոնների գործունեության համադասույթ և մեծացնել դրանց ջանքերի արդյունավետությունը քաղաքացիական և հայրենասիրական համոզմունքների, բարձր բարոյական գաղափարների և ուսանողական երիտասարդության սկզբունքների դաստիարակության գործում, ապահովել ուսումնական և արտաուսումնական աշխատանքների կապը:
- 1.2 Ընդլայնել Համալսարանի Հաղորդակցության, հատուկ կրթության և կրթական հատուկ մոտեցումների կենտրոնի աշխատանքները և վերաձևավորել այն ուսանողների հոգեբանական աջակցման կենտրոնի:

- 1.3 Ուժեղացնել Համալսարանում ուսանողների ստեղծագործական ինքնագործունեության, ստեղծագործական խմբակների ստեղծման աշխատանքները, կենտրոնացնել ԵՊԼՀ-ի ուսանողական ինքնակառավարման մարմինների ջանքերը սոցիալկենցադային հարցերի լուծման վրա:
- 1.4 Ուժեղացնել ուսանողների կյանքի ու գործունեության բարենպաստ պայմաններն ապահովող աշխատանքները:
- 1.5 Աջակցել կամավորական գործունեությանը և դրա տարբեր դրսևորումներին, ստեղծել ուսանողների սոցիալական ու իրավական աջակցման կենտրոն, համակողմանիորեն ակտիվացնել Համալսարանի Շրջանավարտների Միության գործունեությունը:
- 1.6 Ուսանողների շրջանում պարբերաբար կազմակերպել ու անցկացնել միջառարկայական առաջնություններ և օլիմպիադաներ, ընդլայնել նրանց մասնակցությունը միջբուհական և միջազգային մրցույթներին, ցուցահանդեսներին, փառատոներին:
- 1.7 Աջակցել կրթական, թարգմանչական, մշակութային, բուհի գործունեության հետ կապակցված այլ վճարովի ծառայություններ տրամադրող ուսանողական կառույցների ստեղծմանը:
- 1.8 Աջակցել Համալսարանի մարզական խմբակների ակտիվ գործունեությանը, ինչպես նաև օգտագործել Ծաղկաձորի հանգստյան տունը ուսանողների հանգիստը և այլ մարզական և մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար:

ԲԱԺԻՆ 5

ԿԱՂԲՍՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

2006-2010 թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Բարելավվել է հաստիքների պլանավորումը և բարձրացվել է այդ գործընթացի արդյունավետությունը Համալսարանը հասել է օպտիմալ քանակական հարաբերակցության ուսանողների, դասախոսների, ուսումնաօժանդակ, վարչական և սպասարկող կազմի աշխատակիցների թվաքանակի միջև (2010թ. դասախոս-ուսանող հարաբերակցությունը դարձել է 1/15, վարչական, անձնակազմ-դասախոս հարաբերակցությունը՝ 1/3):
2. Մրցութային բարելավված մեխանիզմների հիման վրա իրականացվել է դասախոսական կազմի համալրման և աճի հեռանկարային ծրագիր՝ ապահովելով անձնակազմի միջին տարիքի նվազեցման կայուն միտումներ (2006-ից մինչև 2010թ. դասախոսների միջին տարիքը 53-ից նվազեցնել մինչև 47):
3. Մշակվել և ներդրվել է դասախոսների ուսումնամեթոդական և գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների նոր համակարգ և գնահատման ընթացակարգ՝ պրոֆեսորադասախոսական տարակարգերի առաջընթացի և աշխատավարձի անհատականացված բարձրացման հիմք ընդունելով գործունեության գնահատման արդյունքները:
4. Ներդրվել է դասախոսների մշտական գործող կատարելագործման և վերապատրաստման համակարգը:
5. Չեն ստեղծվել որակապես նոր մեխանիզմներ և չափանիշներ կրթական ծրագրերի բովանդակության, կադրային ապահովվածության և ուսուցման արդյունքների ինքնավերլուծության, ներքին հավաստի գնահատման և հետագա բարելավման համար:

1. Ուսումնական որակի ապահովման նպատակով շարունակել աշխատանքները կադրային ներուժի որակը բարձրացնելու ուղղությամբ և դրան հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- 1.1 Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:
- 1.2 Իրականացնել դասախոսական կազմի բազմաչափ գնահատում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության և անձնային որակների:
- 1.3 Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր՝
 - վերակողմնորոշելով ասպիրանտական /հայցորդական/ կրթությունը դեպի համապատասխան մասնագիտությունների կադրային ապահովում,
 - կատարելագործելով դասախոսական պաշտոնների տեղակալման չափանիշները և գործընթացները,
 - վերամշակելով և բազմազանեցնելով դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագիրը՝ ապահովելով հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը:
- 1.4 Զարգացնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, խթանել այս ուղղությամբ կրթափորձի նոր նախաձեռնությունները, խրախուսել դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսներին:
- 1.5 Իրականացնել ամենամյա գնահատման գործընթացը՝ դասավանդման որակի շարունակական բարելավման նպատակով, գնահատման ցուցանիշներում որպես բաղկացուցիչ կառուցամասեր ուսանողական հարցումների արդյունքների հետ մեկտեղ ներառելով նաև դասախոսի

ինքնագնահատումը :

- 1.6 Ստեղծել կառավարման կառույցների գործունեության արդյունավետության համապատասխան ընթացակարգ:
- 1.7 Ստեղծել դասախոսների համար համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին: Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը
- 1.8 Մշակել և իրականացնել վերապատրաստման նոր կրթական ծրագրեր:
- 1.9 Ստեղծել նպաստավոր պայմաններ և ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառման համար, ապահովել դասախոսական կազմի վերապատրաստումը էլեկտրոնային ուսուցման դասընթացների մշակման և իրականացման համար:
- 1.10 Ձևավորել անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսներ՝ էլեկտրոնային եղանակով ուսուցման դասընթացների մշակման և ներդրման համար:
- 1.11 Ներգրավել դասախոսական կազմը հետազոտական նախագծերում և, հաշվի առնելով դասախոսի գիտական արդյունքը, նախատեսել դրամական խրախուսում:
- 1.12 Ստեղծել ներքին չափանիշներ և ընթացակարգեր՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային և ռեսուրսային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար:
- 1.13 Շարունակել կիրառել և բարելավել դասախոսների անհատական վարկանշային համակարգը: Կատարելագործել մեխանիզմներ և չափանիշներ դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար:

ԲԱԺԻՆ 6

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

*2006-2010 թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և
թերացումներ*

1. Մահմանվել են համալսարանի գիտական գործունեության հիմնական ուղղությունները.
 - Լեզվաքաղաքականություն, ընդհանուր լեզվաբանություն, կիրառական լեզվաբանություն, գուգադրական տիպաբանություն, տեքստի լեզվաբանություն:
 - Ռոմանագերմանական բանասիրություն, ռուսագիտություն, հայագիտություն:
 - Մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսություն և պրակտիկա: Դպրոցական և բուհական դասագրքերի, բառարանների և ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստում:
 - Թարգմանության տեսություն և պրակտիկա:
 - Միջազգային հարաբերություններ և երկրագիտություն:
 - Լեզվի և մշակույթի փիլիսոփայական և հոգեբանական հիմնահարցեր: Տարիքային հոգեբանություն:
 - Գրականագիտություն, Եվրոպայի և Ամերիկայի երկրների գրականություն:
 - Միջմշակութային հաղորդակցություն և մշակութաբանություն:
 - Մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն: Փոխակերպվող հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներ:
2. Բարձրացվել է Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքի արդյունքների մրցունակության և պահանջարկի մակարդակը: Համալսարանի գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությունն ընթացել է համակարգված եղանակով:

3. Խրախուսվել է գիտահետազոտական աշխատանքներում ամբիոնների երիտասարդ գիտնականների դրսևորման ձևերը և խթանվել է դոկտորանտուրան, գործել է երիտասարդ գիտնականների խորհուրդը, որը պարբերաբար սեմինարներ է անցկացրել ամբիոնների երիտասարդ դասախոսների մասնակցությամբ և հրատարակել է գիտական հոդվածների ժողովածու:
4. Իրականացվել է դասախոսների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանավորման, հաշվառման, ամփոփման և խրախուսման գործունեություն:
5. Խրախուսվել է մագիստրոսական ուսումնագիտահետազոտական գործունեությունը՝ լավագույն ուսանողներին ընդգրկելով ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում, գիտաժողովներում և սեմինարներում, իրականացվել է համատեղ աշխատանքների հրատարակում:
6. Խթանվել են հետազոտությունները բարձրագույն և միջնակարգ լեզվաբանական և հումանիտար կրթության ոլորտում:
7. Պարբերական են դարձել տարբեր գիտահետազոտական կոնֆերանսներ և գիտաժողովներ/ «Բարձրագույն լեզվաբանական կրթությունը բարեփոխումների լույսի ներքո»; «Լեզուն և մշակույթը», «Բյուրուստվյան ընթերցումներ», «Ջիվիլեզոյան ընթերցումներ» «Թարգմանչական ֆորումներ», տարբեր լեզուներին և մշակույթներին ընթացող գիտահետազոտական կոնֆերանսներ և սեմինարներ/:
8. ***Գիտական գործունեության ոլորտում ոչ բոլոր դեպքերում է մշակվել և իրագործվել նորարարական քաղաքականության հայեցակարգը: Հաճախակի է հնացած մեթոդաբանության կիրառումը: Գիտական արդյունքների մեծ մասը դուրս է մնում միջազգային գործընթացից: Քիչ են միջազգային ճանաչված հանդեսներում հրատարակումները:***
9. Իրականացվել են մեծ ծավալի հրատարակչային աշխատանքներ. հրատարակվել են հոդվածների համալսարանական և ամբիոնական ժողովածուներ, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից պատրաստած

դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, ստեղծվել են թեմատիկ մատենաշարեր:

10. Ոչ պատշաճ ձևով է անցկացվում կատարված աշխատանքների արդյունքների որակի մոնիթորինգ: ***Թերի է միջամբհոնական գիտական համագործակցությունը:***
11. ***Չի իրականացվել Համալսարանի գիտական ներուժի առավելագույն կիրառում՝ բուհի կրթական գործընթացի և գիտական գործունեության զարգացման ապահովման համար:***
12. *Արդիական է մնում նախորդ ռազմավարական ծրագրի կետն առ այն, որ համալսարանը ակադեմիական հաստատությունից պիտի անցնի նորարարական հետազոտականի և գիտամանկավարժականի՝ ապահովելով գիտելիքի ոչ միայն փոխանցումը, այլև ստեղծումը:*

2. Համալսարանի գիտական ներուժի առավելագույն օգտագործման նպատակով հարկավոր է լուծել հետևյալ խնդիրները.

- 2.1 Ապահովել Համալսարանի գիտական հետազոտությունների և կրթական գործընթացի ինտեգրումը և դրա միջոցով բուհի առաջընթացը:
- 2.2 Ամրապնդել Համալսարանի՝ որպես տարածաշրջանի և ՀՀ միջմշակութային հաղորդակցության ու լեզվաբանության ոլորտում կադրերի պատրաստման կենտրոնի ու առաջատար գիտահետազոտական Համալսարանի դիրքը:
- 2.3 Շարունակել ավանդական դարձած գիտական միջոցառումների անցկացումը, հնարավորինս ապահովելով միջազգայնորեն ճանաչված գիտնականների մասնակցությունը:
- 2.4 Համալսարանում ձևավորել գիտական կենտրոններ՝ ուսումնական ծրագրերում նորարարական գիտելիքների ու փորձի արդյունավետ օգտագործման ու տարածման նպատակով:

- 2.5 Բարձրացնել Համալսարանի ամբիոնների գիտական գործունեության որակը: Արդիականացնել և խորացնել գիտական թեմաները, զարգացնել միջամբիոնական և միջհամալսարանական համագործակցությունը:
- 2.6 Երիտասարդ դասախոսների, ասպիրանտների (հայցորդների) և մագիստրոսների համար պարբերաբար կազմակերպել սեմինարներ, ամառային դպրոցներ արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ համատեղ:
- 2.7 Բարձրացնել ուսանողների գիտահետազոտական գործունեության արդյունավետության որակը, աշխուժացնել համալսարանի, ֆակուլտետների և ամբիոնների ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքները; ապահովել ուսանողների մասնակցությունը այլ բուհերի գիտական համաժողովներին, միջամբիոնային «կլոր սեղաններին» և մեթոդաբանական սեմինարներին, ուսանողական փառատոներին:
- 2.8 Հաշվի առնել ուսանողական գիտական գործունեությունն ակադեմիական գնահատման ընթացքում:
- 2.9 Մշակել և իրականացնել երիտասարդ գիտնականների և դասախոսների աջակցման ծրագրեր:

3. Համալսարանի գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ առաջնային խնդիրները.

- 3.1 Հիմք ընդունելով ՀՀ գիտության զարգացման ծրագիրը մշակել ու հաստատել Համալսարանի գիտական հետազոտությունների զարգացման Ծրագիր:
- 3.2 Նպաստավոր պայմաններ ստեղծել համալսարանի գիտնականների ինտեգրումը համաշխարհային գիտական հանրությանը:
- 3.3 Ընդլայնել Համալսարանի գիտական համագործակցությունը գործընկեր համալսարանների հետ: Մշակել համատեղ գիտահետազոտական նախագծեր:

- 3.4 Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և մագիստրոսների, ասպիրանտների /հայցորդների/ ներգրավվածության ընդլայնման համար:
- 3.5 Գնահատել կատարվող հետազոտությունների արդյունքներն ըստ միջազգային չափանիշների, արդիականության և կիրառելիության, նպաստել ազգային գիտական արտադրանքի արտասահմանյան փորձաքննության ապահովմանը:
- 3.6 Ապահովել մագիստրոսի ծրագրի հետազոտական կողմնորոշումն ու ուղղվածությունը, ատենախոսության թեման պարտադիր կերպով շաղկապել Համալսարանում գիտահետազոտական խնդիրների հետ:
- 3.7 Խրախուսել ուսանողների գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի կիրառական-հետազոտական ուղղվածությունը:
- 3.8 Զարգացնել և ներդնել գիտահետազոտական դրամաշնորհների մեխանիզմը, ակտիվ մասնակցել հանրապետական և արտասահմանյան գիտական դրամաշնորհներին և ծրագրերին:
- 3.9 Աստիճանաբար բարձրացնել Համալսարանի գիտական արտադրանքի միջազգային վարկանիշը, խրախուսել հրապարակումները հեղինակավոր միջազգային հանդեսներում՝ միաժամանակ ավելացնելով արտասահմանյան հեղինակների հրատարակումների քանաքը բուհական հրապարակումներում:
- 3.10 Կիրառել Համալսարանի մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներ:

ԲԱԺԻՆ 7

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2006-2010 թթ նազմավարական ծրագրի ձեռքբերումներ

1. Ընդլայնվել են համալսարանի միջազգային կապերը, բարձրացվել է դրանց որակը և արդյունավետությունը՝ կնքվել են պայմանագրեր տարբեր երկրների 25 համալսարանների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ, հատկապես Եվրախորհրդի, Եվրոպայի Խորհրդի ժամանակակից Լեզուների Կենտրոնի, UNESCO-ի ԱՊՀ լեզուների և մշակույթների խորհրդի, Ֆրանկոֆոն Համալսարանների, Եվրոպայի Լեզվաբանական Խորհրդի, Սևծովյան Համալսարանների Ասոցիացիաների և այլն:
2. Միջպետական պայմանագրերի շրջանակներում բացվել է Համալսարանի Կոնֆուցիուսի Ինստիտուտը, Ավստրիական գրադարանը, Ֆրանկոֆոնիայի էլեկտրոնային կենտրոնը, վրացերենի կենտրոնը:
3. Համալսարանի միջազգային գործունեության աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է միջազգային կապերի բաժին:
4. Համալսարանում մշտապես դասավանդում են արտասահմանյան դասախոսներ:
5. Կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ և սեմինարներ, որոնց մասնակցել են ներկայացուցիչներ միջազգային հեղինակավոր համալսարանների և Եվրոպայի Խորհրդի, UNESCO-ի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչներ: Բուհի դասախոսները հրավիրվել են մասնակցելու հեղինակավոր միջազգային կոնֆերանսներին և սեմինարներին: Եվրախորհրդի հետ համատեղ իրականացվել է «Կրթական լեզվական քաղաքականությունը Հայաստանում» համատեղ ծրագիրը:

6. Դեռևս համալսարանը լիարժեքորեն ներկայացված չէ միջազգային շուկայում. չեն տրամադրվում համապատասխան ծառայություններ և լիարժեք չէ Համալսարանի մասին անհրաժեշտ տեղեկատվություն :
7. *Ստեղծվել են միջազգային կապեր հիմնարար և կիրառական խնդիրների համատեղ հետազոտություն իրականացվելու համար, սակայն դրանք լիարժեք չեն օգտագործվել և սահմանափակվել են միայն միջազգային գիտաժողովներ կազմակերպմամբ: Համատեղ գիտահետազոտական գործունեությունը նույնպես սահմանափակվում է գիտաժողովների կազմակերպմամբ:*
8. *Բացակայում են կապեր համատեղ կրթական ծրագրերի և որակավորման աստիճանների շնորհման փորձի ուղղությամբ:*
9. *Մակավաթիվ են միջազգային դրամաշնորհային ծրագրերը, անբավարար է շարժունակության աստիճանը:*

1. Համալսարանի դիրքը միջազգային ասպարեզում ամրապնդելու և կրթական ծրագրերը միջազգային չանաչում ստանալու նպատակով հարկավոր է լուծել հետևյալ առաջնային խնդիրները.

- 1.1 Մշակել և ընդունել միջազգային գործունեության և զարգացման ծրագիր՝ հիմք ընդունելով «14 կետ. Երևանյան Հռչակագիր»-ը:
- 1.2 Զարգացնել արտասահմանյան բուհերի հետ ուսանողների ու դասախոսների փոխանակումը:
- 1.3 Նախատեսել փորձաքննություն և համատեղ մշակում գործընկեր համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ համատեղ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման նպատակով:
- 1.4 Նպաստել և աջակցել համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստմանը արտասահ-

մանյան գործընկեր համալսարաններում, ինչպես նաև իրականացնել որակավորման բարձրացման համատեղ ծրագրեր:

- 1.5 Ներդնել նոր մասնագիտություններ և առարկաներ արտասահմանյան համալսարանների գործընկերների հետ համատեղ:
- 1.6 Ներդնել նոր արևելյան և արևմտյան լեզուներ:
- 1.7 Ներդնել համատեղ կրկնակի մասնագիտությունների կրթական ծրագրեր՝ կրկնակի դիպլոմներ շնորհելու նպատակով:
- 1.8 Նպաստել համալսարանի դիպլոմների արտասահմանյան երկրներում և համալսարաններում ճանաչմանը:
- 1.9 Կազմակերպել համատեղ հետազոտական խմբեր արտասահմանյան գործընկեր համալսարանների հետ:
- 1.10 Նպաստել Համալսարանի գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակմանը միջազգային հեղինակավոր գիտական հանդեսներում, պատրաստել և տպագրել համատեղ գիտական հանդեսներ:
- 1.11 Ձևավորել ցանցային միջավայր հեղինակավոր միջազգային գիտահետազոտական և կրթական կենտրոնների հետ:
- 1.12 Նպատակաուղղել Համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման ամբիոնի գործունեությունը ճանաչողական լեզվաբանության և նշանագիտության առաջատար կենտրոն դառնալուն:
- 1.13 Նպատակաուղղել Համալսարանի մանկավարժության և օտար լեզուների դասավանդման ամբիոնի գործունեությունը որպես բազմալեզվության և եվրադիդակտիկայի զարգացման առաջատար կենտրոն դառնալուն:
- 1.14 Օգտագործել Համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման և պլանավորման, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության և այլ ամբիոնների ներուժը արտասահմանյան համալսարանների նմանատիպ ամբիոնների, ինչպես նաև միջազգային կենտրոնների համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ:

- 1.15 Բոլոր ամբիոններին, հատկապես լեզվական, զարգացնել կապեր արտասահմանյան համալսարանների և այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման համար:
- 1.16 Մտեղծել համագործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմներ Համալսարանի և հանրապետության այլ բուհերի միջև համատեղ միջազգային գործունեության համար:
- 1.17 Մշակել և ներդնել հայերենը որպես եկրորդ լեզու կրթական ծրագիրը արտասահմանյան ուսանողների համար:

ԲԱԺԻՆ 8

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

2006-2010 թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

Եկամուտների և ծախսերի նախահաշվի եկամտային մասը 2006թ. համեմատ ավելացել է **62.6** տոկոսով (627.6 մլն դրամ), իսկ ծախսային մասը **63.3** տոկոսով (470,1 մլն դրամ)⁵:

1. Համալսարանի վերջին տարիների նախահաշվի եկամտային մասի զգալի տոկոս է կազմել միջազգային համագործակցության շրջանակներում ստացված եկամուտները,
2. Ներդրվել են նոր ուսումնական ծրագրեր, ինչն էապես ավելացրել է համալսարանի եկամտային մասը,
3. 2006թ. Համալսարանի կանոնադրական փոփոխությունների արդյունքում թույլատրված նոր ձեռնարկատիրական գործունեության տեսակների մեծ մասը կիրառվում է (հրատարակչական և տպագրական գործունեություն, լեզուների տարբեր մակարդակների ուսուցում, հանգստի կազմակերպում),
4. Համալսարանում ներդրվել է հատուկ հաշվապահական ծրագիր, որը հնարավորություն է ընձեռել ամբողջությամբ էլեկտրոնային ձևով իրականացնել համալսարանի հաշվապահական և ֆինանսական կառավարումը,
5. Ներդրվել է Համալսարանում հիմնական միջոցների կողմնորված թվային հաշվառման համակարգը,
6. Համալսարանի Հովսեփ Էմին 123 հասցեում գտնվող մասնաշենքը գազիաֆիկացվել է և շենքում ամբողջությամբ մոնտաժվել է ջեռուցման համակարգ, վերանորոգվել և կահավորվել է արտասահմանցի ուսանողների համար նախատեսված 5 հանրակացարանային սենյակ և խոհանոց,

⁵ Հաշվարկը չի ներառում տվյալ ժամանակահատվածում կատարված կապիտալ ներդրումների ծախսերը:

Նյութատեխնիկական բազայի արդիականացում

1. 2008-2009թթ. շահագործման են հանձնվել Համալսարանի գրադարանի նոր մասնաշենքը, որտեղ գործում է նիստերի դահլիճ և թանգարան, բարելավվել են աշխատանքային պայմանները գրադարանի աշխատակիցների համար, մեծացվել է գրապահոցը, ընթեցասրահները և այլն:
2. Ամբողջովին վերանորոգվել են համալսարանի Թումանյան 42 հասցեում գտնվող մարզադահլիճը, երկրորդ մասնաշենքի նիստերի մեծ դահլիճը, ավելացվել են հոսքային և խմբային լսարանների քանակը, նշված տարածքները համալրվել են ուսումնական նոր գույքով:
3. 2006թ. վերջից շահագործման է հանձնվել Համալսարանի Ծաղկաձորի հանգստյան տունը, որը ծառայում է համալսարանի աշխատակիցների և ուսանողների հանգիստը կազմակերպելու, ինչպես նաև գիտական և այլ միջոցառումներն անցկացնելու նպատակով:
4. Բարելավվել են աշխատանքի և ուսուցման պայմանները. բարելավվել են, վերանորոգվել և հիմնավերանորոգվել են աշխատասենյակներ և ուսումնական տարածքներ:
5. Համալսարանում վերջին տարիների խնայողական քաղաքականության շնորհիվ հաջողվել է ճգնաժամային տարիներին ավելացնել դրամական վճարման չափը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար ներդրվել է աշխատավարձի հավելման բոնուսային համակարգը, մշակման փուլում են ուսումնաօժանդակ և վարչական աշխատողների բոնուսային համակարգի չափորոշիչները:
6. Ներդրվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհատական ցուցանիշների հիման վրա գործող գնահատման համակարգ, որը հնարավորություն է տալիս ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուր դասախոսի կատարված մանկավարժական և գիտական աշխատանքին:
7. Համալսարանի աշխատակիցների աշխատավարձը 2006թ. համեմատ փաստացի կատարողականի հիման վրա աճել է **60%**, 2010թ. այն կազմել է 831484,3 հազ. դրամ:

1. Համալսարանի ֆինանսատնտեսական համակարգի արդյունավետ գործունեության նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- 1.1 Ընդլայնել և զարգացնել Համալսարանում ներդրված ֆինանսական պլանավորման համակարգը, ապահովել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու նպատակային բաշխումը, բարձրացնել ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:
- 1.2 Մահմանել կողմնորոշիչ համամասնություններ Համալսարանի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանն ու ենթակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև՝ ըստ տարիների:
- 1.3 Նպատակաուղղել Համալսարանի հետագա ծախսային քաղաքականությունը բուհի առջև ծառայած և կենսական կարևորություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը, իսկ տարեկան հասույթը ուղղել Համալսարանի զարգացմանը և աշխատակիցների սոցիալական խնդիրների լուծմանը՝ հետևյալ համամասնություններով.
 - Մշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ – մինչև 60 %
 - Կապիտալ ներդրումներ – մինչև 25 %
 - Հիմնական միջոցներ – մինչև 22 %
 - Շրջանառու միջոցներ – մինչև 5 %
 - Ուսման վարձի գեղջեր և բարեգործություն- մինչև 6.5 %
- 1.4 Մշակել և ներդնել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ, շարունակել աշխատանքները Համալսարանի վարչական և սպասարկվող կազմի գործունեության քանակական և որակական ցուցանիշների հետագա բարելավման ուղղությամբ:
- 1.5 Դիմել ՀՀ կառավարությանը վերանայելու և փոփոխելու համալսարանին թույլատրված ձեռնարկատիրական գործունեության տեսակները շուկայի պահանջներին համապատասխան:

1.6 Գործատուների շրջանում աշխատանքներ ծավալել համալսարանի հետ իրականացնելու համատեղ ծրագրեր և ներդրումներ կատարելու համալսարանի կողմից իրականացվող ծրագրերում:

2. Համալսարանի եկամուտների զգալի ավելացման նպատակով առաջնային է համարվում հետևյալ խնդիրների լուծումը.

- 2.1 Զարգացնել և օգտագործել Համալսարանի ֆինանսավորման կառուցակարգերը, ընդլայնել Համալսարանի կանոնադրությամբ վերապահված ձեռնարկատիրական գործունեության տեսակները:
- 2.2 Բարձրացնել Համալսարանի ձեռնարկատիրական գործունեության իրականացման արդյունավետությունը՝ Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության և ֆինանսական կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացման հիման վրա:
- 2.3 Ստեղծել պայմաններ շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալը Համալսարանի զարգացման ծրագրերում մեծացնելու համար:
- 2.4 Համալսարանի գործունեության արդյունքները արդյունավետ առևտրայնացնելու նպատակով օգտագործել համացանցի հնարավորությունները:
- 2.5 Ստանալ լրացուցիչ ֆինանսական եկամուտներ շարունակական և լրացուցիչ կրթական ծրագրերից:
- 2.6 Ընդլայնել և շարունակաբար զարգացնել Համալսարանի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի առևտրայնացումը կրթական, գիտահետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում:
- 2.7 Նպաստել Համալսարանի ստորաբաժանումների սեփական արտաբյուջետային միջոցների ձևավորմանը և հավաքագրմանը, խթանել նրանց նախաձեռնությունը ինքնուրույն ֆինանսական միջոցների ձևավորման գործընթացներում:
- 2.8 Ընդլայնել ԵՊԼՀ վճարովի ծառայությունների տեսակները և ծավալները, բարձրացնել այդ ծառայությունների եկամտաբերությունը:

Եր. Վ. Բյուտվի անվ. պետական
լեզվաբանական համալսարանի

2011-2015 կանխատեսվող
եկամուտներ

	2011	2012	2013	2014	2015	Ընդամենը
Ֆինանսավորում պետ բյուջեից	141 53 8,0	151 00 0,0	150 00 0,0	163 00 0,0	167 000 ,0	772 538,0
Ուսման վարձ	1 220 36 9,0	1 147 36 8,6	1 399 76 2,2	1 488 12 5,7	1 490 000 ,0	6 745 625,5
Դրամաշնորհներ	40 00 0,0	35 00 0,0	38 00 0,0	41 00 0,0	42 000 ,0	196 000,0
Այլ եկամուտներ	70 90 0,0	60 00 0,0	63 00 0,0	65 00 0,0	65 700 ,0	324 600,0
	1 472 80 7,0	1 393 36 8,6	1 650 76 2,2	1 757 12 5,7	1 764 700 ,0	8 038 763,5

3. Ուսուցման և աշխատանքի պայմանների բարելավման նպատակով

- 3.1 Իրականացնել Համալսարանի բոլոր լսարանների տեխնիկական արդիականացում ուսումնական շենքերի ժամանակակից տեխնիկական միջոցների առկայությունը կանոնակարգող չափանիշների մշակման և ներդրման ճանապարհով:
- 3.2 Ընդլայնել Համալսարանի հանրակացարանային հնարավորությունները՝ արտասահմանյան ուսանողների քանակը ավելացնելու նպատակով:
- 3.3 Հիմնանորոգել համալսարանի Հովսեփ Էմին 123 հասցեում գտնող մասնաշենքը
- 3.4 Շահագրգիռ կազմակերպությունների և մարմինների հետ համատեղ շարունակել Կողբացի 42 հասցեում գտնվող մարզադահլիճի համար փոխհատուցման բանակցությունները՝ ելնելով նախկինում ձեռք բերված պայմանավորվածություններից:
- 3.5 Համալսարանի Թումանյան 42 հասցեում գտնվող մասնաշենքի վրա ավելացնել ևս մեկ հարկ:
- 3.6 Ծաղկաձորի հանգստյան տանը իրականացնել բարեկարգման և շենքային պայմանների բարելավման աշխատանքներ:

4. Սոցիալական աջակցություն

- 4.1 Ապահովել ժամանակակից միասնական սոցիալ-մշակութային համալսարանական միջավայր՝ բուհի սպորտային, առողջարարական և մշակութային ենթակառուցվածքի ստեղծմամբ:
- 4.2 Բարելավել Ծաղկաձորի հանգստի տան պայմանները, ստեղծել նոր հնարավորություններ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հանգիստը կազմակերպելու համար:
- 4.3 Նախատեսել աշխատավարձի և հավելյալ վճարումների բարձրացում կապված կոնկրետ աշխատակցի կատարած

աշխատանքի, որակի, ծավալի, դրա գործնական
պիտանելիության հետ:

- 4.4 Մտեղծել պայմաններ ուսանողների և աշխատակիցների
ազատ ժամանակը հետաքրքիր և արդյունավետ անցկացնելու
համար:

ԲԱԺԻՆ 9

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2006-2010 թթ ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Համալսարանը ձեռք է բերել նոր տեխնիկական միջոցներ, համակարգիչներ և հարակից սարքավորումներ, որոնց զգալի մասը՝ դրամաշնորհային միջոցների հաշվին ընդհանուր գումարով **68967,4** հազ. դրամ:
2. Ստեղծվել են նոր համակարգչային լսարաններ, ներդրվել են գիտելիքների ստուգման էլեկտրոնային թեստավորման համակարգեր:
3. Գործում է ֆրանկաֆոնիայի թվայնացված կենտրոնը:
4. Չորս լսարաններ հազեցված են տեսակոնֆերանսի սարքավորումներով և հեռավար դասընթացներ անցկացնելու սարքավորումներով, թվով վեց լսարաններում տեղադրվել են պրոեկցիոն սարքավորումներ:
5. Համալսարանի բոլոր երեք դահլիճները կահավորված են ինտերնետ կապով, տեսաձայնային և համաժամանակյա թարգմանության շարժական սարքավորումներով:
6. Համալսարանում դասավանդվող տարբեր առարկաներից կիրառվում է գիտելիքների ստուգման էլեկտրոնային թեստավորման եղանակը:
7. Համալսարանի բոլոր դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերը տեղադրված են ամբիոնների կայքէջերում, մասամբ առկա են դասախոսների դասախոսությունները կամ դրանց սեղմ նկարագրերը:
8. Ներդրվել և կիրառվում է ուսումնական առաջադիմության տվյալների մուտքագրման և կառավարման էլեկտրոնային համակարգը:
9. Մասամբ գործում և մշակման փուլում են համալսարանի էլեկտրոնային շտեմարանները:

10. Համալսարանի ամբիոններում որոշ դասախոսներ մասնագիտանում են էլեկտրոնային թեստերի մշակման և ներդրման ոլորտում:
11. Համալսարանի բոլոր հրապարակումները (ժողովածուներ, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, տեղակատվական բուկլետներ և այլ նյութեր հայերեն և օտար լեզուներով) թվայնացված և տեղադրված են Համալսարանի կայքում:
12. Մասամբ է ստեղծվել ամբիոնների գիտական և կրթական ռեսուրսների միասնական էլեկտրոնային համակարգ:
13. Մասամբ է ստեղծվել և ներդրվել Համալսարանի էլեկտրոնային կառավարման համակարգ:
14. Չի ներդրվել «լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ» կրթական ծրագիրը:

1. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ կրթական և գիտական նոր որակի ձեռքբերման նպատակով առաջնային է համարվում հետևյալ խնդիրների լուծումը.

- 1.1 2011-2015թթ. ապահովել անցում ուսանողների գիտելիքների ստուգման էլեկտրոնային համակարգին բոլոր գործնական և տեսական առարկաներից:
- 1.2 Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Համալսարանի ուսումնական գործընթացներում:
- 1.3 Ձևավորել էլեկտրոնային (on-line) ուսուցման լսարանների ցանց, ացնել Համալսարանում ներդրված ֆինանսական պլանավորման համակարգը, ապահովել ֆինանսական ռեսուրսների վիճակը և պլանավորել դրանց հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունները:
- 1.4 Ընդլայնել Համալսարանի գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահների արդյունավետ ու նպատակային բաշխում, համալսարանական շտեմարանը, բարձրացնել էլեկտրոնային քարտարանի օգտագործման հնարավորությունները:

- 1.5 Ներդնել «լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ» կրթական ծրագիրը:
- 1.6 Ապահովել համալսարանի բոլոր դասընթացների էլեկտրոնային դասախոսությունների կամ սեղմ նկարագրերի առկայությունը համալսարանի կայքում:
- 1.7 Ընդլայնել և խրախուսել գիտակրթական գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը:
- 1.8 Ներդնել էլեկտրոնային ուսուցման, էլեկտրոնային դասընթացների հեռավար ուսուցման ձևեր:
- 1.9 Համալսարանական տարածքներում ուսանողներին և դասախոսներին ապահովել ազատ մուտք ինտերնետ:
- 1.10 Ավարտել Համալսարանի էլեկտրոնային կառավարման համակարգի լիարժեք ներդրումը, ստեղծել միացյալ տեղեկատվական ուսումնական տարածք:
- 1.11 Համալսարանի կայքում ստեղծել հնարավորություն օնլայն ռեժիմով առարկայի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, գնահատակները դիտելու, կամընտրական դասընթացները նստրելու և գրանցվելու, առարկայի վերաբերյալ նյութերը ուսումնասիրելու համար:
- 1.12 Ապահովել կայքի նյութերի օտար լեզուներով թարգմանությունը:
- 1.13 Ապահովել համալսարանի կայքի դիզայնի և բովանդակության մշտական նորացումը և բարելավումը:

2 Համալսարանի միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակով կարևորվում է հետևյալ խնդիրների լուծումը

- 2.1 Ամբիոնների գիտական և կրթական էլեկտրոնային ռեսուրսների հիման վրա ստեղծել միասնական տեղեկատվական համակարգ:
- 2.2 Ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

- 2.3 Կատարելագործել տեխնիկական տեղեկատվական միջոցների պարբերական արդիականացումը և իրականացնել ծրագրային-տեղեկատվական բազայի թարմացում:
- 2.4 Շարունակել տպագիր, տեսա- և ձայնային տեղեկատվական նյութերի թվայնացումը:

3. Գրադարանային գործունեության զարգացման նպատակով

- 3.1 Ապահովել ընթերցասրահներ ժամանակակից սարքավորումներով և ծրագրերով:
- 3.2 Ընդլայնել Համալսարանի մասնակցությունը միջոցառումների կառավարման ցանցերին և կոնսորցիումներին, բարձրացնել արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը Համալսարանի ուսանողների և դասախոսների համար: Մտեղծել էլեկտրոնային ուսումնամեթոդական ռեսուրսների բուհական վիրտուալ գրադարան:
- 3.3 Իրականացնել գրադարանի արդիականացում, համալրել Հայաստանում և արտերկրում հրատարակված գրքերի էլեկտրոնային տարբերակներով:
- 3.4 Հիմնել Համալսարանի գրադարանային խորհուրդ՝ գրադարանի և Համալսարանի հիմնական ուսումնական և գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար:

4 Համալսարանի հրատարակչական գործունեության զարգացման և էլեկտրոնային հրատարակումների ծավալների ավելացման նպատակով

- 3.6 Ընդլայնել Համալսարանի հրատարակչության և տպարանի տեխնիկական հնարավորությունները՝ պատրաստված նյութերը օպերատիվ տպագրելու նպատակով:
- 3.7 Ապահովել համալսարանի հրատարակչատունը համապատասխան ժամանակակից սարքավորումներով:
- 3.8 Ավելացնել Համալսարանի օտար լեզուներով գիտական ամսագրերի, ժողովածուների և պրակների հրատարակումները:

- 3.9 Ապահովել Համալսարանում պարբերաբար թողարկվող գիտական ժողովածուների և պրակների անգլերեն տարբերակներ էլեկտրոնային ձևաչափով:
- 3.10 Ավելացնել Համալսարանի ընդհանուր թողարկված հրապարակումների մեջ էլեկտրոնային հրատարակումների մասնաբաժինը:
- 3.11 Նախատեսել Համալսարանի հրապարակումների և դրանց էլեկտրոնային տարբերակների իրացման արդյունավետ մեխանիզմներ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

2006-2010 թթ. ռազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Բարձրացվել է բուհի կառավարման համակարգի արդյունավետությունը, ապահովվել են որոշումների կայացման կոլեգիալությունը, թափանցիկությունը, բարելավվել է արտա- և ներհամալսարանական տեղեկատվական ցանցը:
2. Տեղի են ունեցել փոփոխություններ համալսարանի կառավարման համակարգում, մասնավորապես ռեկտորատի, գիտական խորհրդի, կառավարման խորհրդի որոշումներն ամբողջությամբ հասանելի են ԵՊԼՀ կայքում, առնվազն եռամսյակը մեկ անգամ ուսումնասիրվում և ռեկտորատի և գիտական խորհրդի ուշադրությանն է ներկայացվում ընդունված որոշումների կատարման ընթացքը, վերլուծվում են թերի կատարված որոշումների պատճառները և հետագա անելիքները՝ դրանք կատարելու համար:
3. Ճշգրտվել են ֆակուլտետների և ամբիոնների մասնագիտական ուղղվածությունն ու գործառույթները, տարանջատվել են պատասխանատվությունները, օպտիմալացվել են Համալսարանի ստորաբաժանումների կառուցվածքները:
4. Համապատասխան կանոնադրությունների, կարգերի և կանոնակարգերի ընդունմամբ կանոնակարգվել են բոլոր ստորաբաժանումների գործառույթները և գործունեության շրջանակները, համալսարանում գործող բոլոր կառուծվածքային ստորաբաժանումները (ուսումնական և սպասարկող, տեխնիկական) ունեն իրենց գործունեությունը կարգավորող փաստաթղթեր, որոնք մշակվել են ՀՀ գործող օրենսդրության հիման վրա: Տվյալ ուղղությամբ կատարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ:
5. Համալսարանի ուսանողների և աշխատաշուկայի միջև կապը ուժեղացնելու, ուսանողների մասնագիտական ուղղվածությանը

նպաստելու և ԵՊԼՀ-ի համար աշխատաշուկայի ուսումնասիրություն իրականացնելու համար ստեղծվել է կարիերայի կենտրոնը:

6. Ստեղծվել են պայմաններ Համալսարանի մագիստրատուրայի լավագույն շրջանավարտների համար՝ անմիջապես աշխատանքի անցնել համալսարանի համապատասխան ստորաբաժանումներում:

1. Համալսարանի կառավարման համակարգի զարգացման, օպտիմալացման և արդիականացման համար հարկավոր է

- 1.1 Վերամշակել օրենսդրությամբ բուհին վերապահված կառավարման կանոնակարգերը՝ խրախուսելով նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը և ընդունված որոշումների իրականացման համար պատասխանատվությունների անձնականացումը:
- 1.2 Բարձրացնել ստորաբաժանումների ինքնավարությունը, խթանել միջամբիոնական և միջֆակուլտետային հորիզոնական որոշումների կայացման և իրականացման մեխանիզմները՝ միաժամանակ ուժեղացնելով վերահսկողության, խրախուսման և պատասխանատվության մեխանիզմները:

2. Կիրառել արդյունավետ կառավարման մեխանիզմներ՝ աշխատակիցների մասնագիտական գործունեության և սոցիալական պայմանների մակարդակը բարձրացնելու նպատակով և դրան հասնելու համար լուծել հետևյալ խնդիրները.

- 2.1 Ընդլայնել կառավարման համակարգի գործառական հնարավորությունները ժամանակակից ծրագրային և տեղեկատվական միջոցների կիրառմամբ:
- 2.2 Կատարելագործել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմը ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման:
- 2.3 Կոնկրետ խնդիրների և ծրագրերի իրականացման համար

կիրառել ժամանակավոր խմբերի և կառույցների ստեղծման
պրակտիկան:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2006-2010 թթ նազմավարական ծրագրի ձեռքբերումներ և թերացումներ

1. Համալսարանի ուսանողները որպես կամավորներ մասնակցել են գրեթե բոլոր միջազգային նշանակության մշակութային, մարզական և հանրային միջոցառումներին:
2. Համալսարանի 75-ամյա հոբելյանի կապակցությամբ բացվեցին բուհի թանգարանը և Վ.Բրյուսովի թանգարանը:
3. ԵՊԼՀ 75-ամյանկին նվիրված մջոցառումների շրջանակներում տեղի ունեցավ գործընկեր համալսարանների ռեկտորների կոնֆերանս, որի արդյունքում ստորագրվեց «14 կետ. Երևանյան հռչակագիր» համագործակցության պայամանագիրը:
4. Համալսարանում ստեղծվել է հանրային կապերի բաժին, որի գործառույթների մեջ է մտնում ԶԼՄ-ների հետ կապի պահպանումը և բուհի գործունեության մասին տեղեկատվության տրամադրումը:
5. Հայաստանի Հանրային Հեռուստատեսության հետ կնքվել է բացառիկ համագործակցության պայամանագիր, իսկ Համալսարանի միջազգային լրագրություն բաժնի ուսանողներին հնարավորություն է ընձեռվել իրենց արտադրական պրակտիկան անցկացնել Հայաստանի Հանրապետության առաջատար լրատվական միջոցներում և գործակալություններում:
6. Համալսարանի դերը և բարի համբավը հասարակությունում ամրապնդելու նպատակով մշտական բնույթ են կրում տարբեր միջոցառումների անցկացումը, որոնց մասնակցում են Հայաստանի և արտերկրի տարբեր ոլորտների (հասարակական, քաղաքական, մշակութային, պետական և այլն), նշանավոր անձինք:
7. Ապահովվել է ԶԼՄ-ների հետ Համալսարանի ակտիվ համագործակցությունը: Կատարելագործվել է վեբկայքը, բարելավվել են

- նրա լրատվական ապահովումը, տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը:
8. Համալսարանի օժանդակությամբ պետական գրանցում է ստացել և գործում է Համալսարանի շրջանավարտների միությունը:
 9. Համալսարանի մասին տեղեկատվության տարածման համար ստեղծվել են եռալեզու բուկլետներ, տեղեկագրեր, համալսարանի 75 ամյակի հոբելյանական այլ նյութեր, այդ թվում Համալսարանի 75-ամյա պատմությունը ներկայացնող արխիվային փաստաթղթերի ժողովածուն:
 10. Համալսարանը մշտապես ներկայացված է միջազգային և հանրապետական կրթական և գրահրատարակչական ցուցահանդեսներում և գիտակրթական ֆորումներում, նշանավոր հասարակական հնչողություն ունեցող միջոցառումներում:
 11. Դեռևս անբավարար է սեփական տեղեկատվական նյութերի հրապարակումը և տարածումը,

1. Հասարակության հետ կապերի զարգացման և քննադանման նպատակով համալսարանը կարևորում է հետևյալ առաջնային խնդիրների լուծումը

- 1.1. Մշակել և իրագործել Համալսարանի հասարակության հետ կապերի զարգացման միասնական ծրագիր՝ հիմնված բուհի կրթական, գիտական, միջազգային ասպարեզում իրականացվող քաղաքականության վրա:
- 1.2. Զարգացնել հասարակության հետ համալսարանի կապերը, հանրային ծրագրերում ապահովել Համալսարանի առավելագույն ներգրավվածությունը:
